



**Չինաձածկ
Նի Եորքի Սուրբ
Վարդան Մայր
Տաճարը բաց պահեց
իր դռները
հաւատացեալներուն
առջեւ**

ՄԻՐԶՈՅԵԱՆ.

«ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԴԺՈՒԱՐԻՆ ԳՈՐԾ Է՝ ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՎ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ՈՒ ԱՅԼ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐ»

Հայաստանի Արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան 23 Փետրուարին Ժընևի մէջ, ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց խորհուրդի նիստին յայտարարած է, թէ հաշտութիւնը դրժարին գործ է՝ նկատի ունենալով Պաքոյի մէջ տակաւին պահուող 19 հայ բանտարկեալներու, անհետացածներու ճակատագրերուն պարզաբանման անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ աղաւաղուած պատմական պատումները:



ԻՐԱՆ ՄԵՐԺԱՍ Է ԹՐԱՄՓԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՍԱՁԱՅՆԱԳԻՐԸ. ՄՏԵՆ ՏԵՂԵԿԱՑԱՍ Է ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐՈՒՆ

26 Փետրուարին Ժընևի մէջ ԱՄՆ-Իրան բանակցութիւնները աւարտած են առանց համաձայնագիրի: Երկու կողմերը կը շարունակեն տարաձայնութիւններ ունենալ հիմնական հարցերու շուրջ, հաղորդած է The Wall Street Journal-ը:

Բանակցութիւններու ընթացքին Թրամփի դեսպաններ Սթիւ Վիքթօր Էյ Գարետ Բուշները յայտարարած են, որ Իրան պէտք է ոչնչացնէ իր երեք հիմնական միջուկային նպատակները՝ Ֆորտոն, Նաթանգըր և Մպահանը: Աւելին, Թեհրանը պէտք է ԱՄՆ-ին յանձնէ մնացած հարստացուած ուրանը:



ԱՄՆ դեսպանները նաեւ յայտարարած են, որ որդեկան միջուկային համաձայնագիր պէտք է ըլլայ անորոշ ժամանակով, այլ ոչ թէ դադրեցուցիչ, ինչպէս ան եղաւ Պարսք Օպամայի վարչակազմի օրօք կնքուած միջուկային համաձայնագիրի ժամանակ:

Ինչպէս յայտնի է, Տոնալտ Թրամփ իր առաջին ժամկէտի ընթացքին դուրս եկաւ Համապարփակ գործողութիւններու ծրագրէն (JCPOA)՝ վերականգնելով Իրանի դէմ խիստ պատժամիջոցները:

Վերադառնալով Ժընևի բանակցութիւններուն՝ Իրանը մերժած է իր ուրանի պաշարները արտասահման տեղափոխելու գաղափարը: Թեհրան նաեւ դէմ է ուրանի հարստացման դադրեցման:

Բացի այդ, բաց աղբիւրներու եւ ԱՄՆ պաշտօնեաներու յայտարարութիւններու հիման վրայ, Թրամփ սպառնացած է ռազմական գործողութիւններ ձեռնարկել, եթէ համաձայնութեան չհասնին: Միաժամանակ, ան շարունակած է մարտական ուժեր տեղակայել տարածաշրջանին մէջ՝ հարուածին նախապատրաստուելու համար:

ԻՐԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԱՍ ԵՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Իրան կատարած պաշտօնական այցելութեան ժրէն ներս, Հայաստանի Պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան հանդիպում ունեցած է իր իրանցի պաշտօնակիցին՝ Ազիզ Նասիրզադէի հետ:



Անոնք միտքեր փոխանակած են տարածաշրջանային ու միջազգային անվտանգութեան առնչուող շարք մը հարցերու շուրջ:

Պապիկեան եւ Նասիրզադէ, բարձր գնահատելով պաշտպանութեան բնագաւառէն ներս Հայաստան-Իրան համագործակցութեան մակարդակը, հաստատակամութիւն յայտնած են շարունակելու աշխատանքները երկկողմանի յարաբերութիւններու զարգացման ուղղութեամբ, ինչպէս նաեւ քննարկած են երկու երկիրներու գործակցութեան վերաբերող շարք մը հարցեր:

Հանդիպումին մասնակցած է նաեւ Իրանի մէջ Հայաստանի դեսպան Գրիգոր Յակոբեան:

ԱՏՐՊԵՅՃԱՆ ՊԻՏԻ ՉՍԱՍՆԱԿՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ ՎԵՂՃՈՂՈՎԻՆ

Ըստ ատրպէյճանական APA լրատու գործակալութեան՝ երկրին Արտաքին գործոց նախարար Ռէյխան Պալաւանով յայտարարած է, թէ «Ատրպէյճանի որդեկան մակարդակով մասնակցութիւն նախատեսուած չէ Հայաստանի մէջ կայանալիք Եւրոպական քաղաքական համայնքի վեհաժողովին»:



Նախարարը նշած է, որ մնացած այցելութիւն նախատեսուած չէ նախագահ Իլհամ Ալիեւի Մայիս ամսուան ժամանակացոյցին մէջ:

Հայաստանի Արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան անցեալ Հոկտեմբերին յայտնած էր, որ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի նախագահները հրաւիրած են Երեւան՝ գարնան կայանալիք Եւրոպական քաղաքական համայնքի վեհաժողովին: Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանն ալ ըսած էր, որ Երեւան կ'ակնկալէ երկու երկիրներու ղեկավարներուն մասնակցութիւնը:

Ատրպէյճանի նախագահի օգնական Հիքմէթ Հաճիեւ հաւանական չէր նկատած Ալիեւի այցելութիւնը Երեւան:

Եւրոպական քաղաքական համայնքի 8-րդ վեհաժողովը Երեւանի մէջ պիտի կայանայ տարուոյ Մայիս 4-ին:

Նիւ Եորքի

21 Փետրուարի երեկոյեան ԹՄՄ-ի ընտանիքի հաւատարմոր ընկերներ եւ բարեկամներ լեցուցեր էին մասնաճիւղի կեդրոնի սրահը նոր յանձնառութեամբ վերաշխուժացնելու համար թատերական եւ մշակութային կեանքը այս մեծ ոստանէն ներս:



Հաւաքին բացումը կատարեց ԹՄՄ «Միեր Սկրտչեան» թատերախումբի սիրուած պատաս-

ԹԵՔԵԵԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱԻԱՔԸ

խանատու-բեմադրիչ Յարութ Չաթմաճեան: Գործադրուեցաւ որակաւոր երաժշտական յայտագիր մը մասնացութեամբ Լոս Անճելըսէն ժամանած արուեստագէտներ Ալիսիա Քէօշկերեանի (քանոն),



Շանթ Դանիլեանի (ջութակ) եւ Նիւ Եորքէն թատերախումբի անդամ Յարութ Պարսումեանի (կի-

թառ): Հրամցուեցաւ հայ դասական, աշուղական, ժողովրդական երաժշտական հանրաժանօք գործեր, ինչպէս նաեւ օտար լեզուներով ճոխ յայտագիր մը, ինչպէս Ազնաուր ու Ֆէյրուզ: Անոնք ներկայացուցին այս յայտագիրը խլելով ներկաներուն յուզմունքը... տանելով զիրենք դէպի անցեալ, Միջին Արեւելքի իրենց ծննդավայրերը բարի յիշատակներով:

Հիւրասիրուեցան հայկական զինիով եւ ծանօթ պանիքի տեսակներով ու երշիկներով, որոնք տուին արթնութիւն եւ խանդավառութեան առիթ: Ներկաներուն մէջ էին Նիւ Եորքիի Թեքեանի ծանօթ բարերար ազգայիններ ու պատասխանատու վարչականներ:

Աւարտին, բոլորին խնդրանքն էր ունենալ յաճախակի մտան ընտանեկան հաւաքոյթներ շաղկապելու անդամակցութիւնը կազմակերպութեան շուրջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԾԵՍԱՐԸ ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆՆԻՔՆ Է

Յատուկ «ԴԱՅՔԱՐ» ին

**Մարդն ստեղծում է հրէշներ, յետոյ վախենում է սեփական գործից...:
Չի կարելի օգնել այն ընկածին,
որին պակասում է ինքնօգնութեամբ ոտքի կանգնելու կամքը...
Գարեգին Նժդեհ**

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳՂ, փրոֆէսոր

Պատմաբան են եւ, բնականաբար, ինձ միշտ մի հարց է տանջում. գոյութիւն ունի՞ հայկական հիմնախնդիր եւ ո՞րն է դա: Ինչո՞ւ ցայսօր չճշտուեցին մեր երկրի եւ ժողովրդի ճակատագիրը շօշափող խնդիրները եւ սրանց կարեւորութեան աստիճանը: Առանց ճշմարտախուզութեան՝ կա՞յ անցեալը հասկանալու ճիգ եւ առանց որի հնարաւոր է նպատակային դիրքորոշում: Յետոյ էլ՝ առանց վերջինի՝ կա՞յ լուրջ աշխատանք՝ ապագայի համար: Առհասարակ, մոլորութիւնը եւ ինքնախաբէութիւնը չե՞ն մեր կեանքն ուղղորդող ուժերը: Արդեօ՞ք ճիշդ է, որ մենք բնամիներ եւ բարեկամներ ունենք: Եթէ այո, ապա ի՞նչ ենք անում բնամիների դէմ եւ ի՞նչ՝ բարեկամների համար: Արդեօ՞ք հասարակագիտութեան տեսանկյունից հիմնաւորաւ՞ծ է օրուայ հայ խօսքն ու մամուլը: Ինչպէս ժամանակին զարմացած հարցնում էր մեծ մտածող Հայկ Ասատրեանը, ինչո՞ւ՞ հայ կեանքում ամէն խօսք կրում է ծիծաղելի մեծամտութեան կամ թունաքափութեան կնիք եւ ինչո՞ւ ըստ իր բանական կշռի չի գնահատում ճշմարտութիւնը: Իսկապէս, երբ դիտարկում ես հայոց անցած ճանապարհը, ակամայ հարց է առաջանում, թէ քանի՞ զգացումի, քանի՞ ճշմարտութեան է ծառայում իւրաքանչիւր հայ: Եւ արդեօ՞ք ներքուստ պատակտուած այս հասարակութիւնով կարելի՞ է ստեղծագործ ազգ, հայրենիք, պետութիւն ունենալ: Արդեօ՞ք ժամանակը չէ, որ իւրաքանչիւրս հասկանանք. ես եթէ ուզում եմ ինչ որ յաջողութիւն, դա դեռ շատ քիչ է, պէտք է ժողովրդի մեծամասնութիւնն ուզի, որ պիտի վերջապէս մոռանանք եւր եւ ընդունենք մենքը...

Պատմութիւնը կենդանի օրգանիզմ է եւ, ցաւօք, մեր օրերում սկզբունքները փոփոխում են յանուն փողի, ազգերը վաճառում են փողին, պատիւը վաճառում է փողին, եղբայրներն ու ընտանիքները բաժանում են փողի պատճառով, մարդիկ են սպանում փողի պատճառով: Բայց ինչպէս հայ նշանատր գրող Ղազարոս Աղայեանն էր ասում. «Մեր ժողովրդի գլուխը հաստ է, իրան իրաւունքն ու պարտականութիւնը չի ճանաչում, լաւն ու վատը չի հասկանում, սուտը ճշմարիտի տեղ է ընդունում, ճշմարիտը՝ սուտի տեղ, էլ ի՞նչ ասես, էլ ո՞ւմ խօսք հասկացնես... Գլուխ գովալով ապրում են ներքուստ վախկոտ ու սարուկ խղճուկ հոգիները, անցնում մութ ճանփե՞ն՝ հասկացողին արհամարհելով ու ոտնատակ տալով, անհասկացողին՝ քծնելով, գովաբանելով, շուքի առաջը խոնարհուելով ու նրանից փրկութիւն աղերսելով»: 300 տարին էլ մեզ դաս չեղաւ, չհասկացանք, թէ ով է թուրքը, ով ռուսը: Էլ ինչ պիտի նրանք մեզ անեն, որ ոչ թէ արքայազնի տանք, այլ ազգին համախմբենք, բալոր տականքների դէմ: Յարթենք, նոր իրար ուտենք: Թէ չէ յայտնուել ենք մի իրավիճակում, մի երկրում, որտեղ հայրենիք սիրելը յանցագործութիւն է, դատաճանելը՝ պաշտօնն ու վայելք, հայրենիք կորցնելը՝ ապրելակերպ, լուրջութիւնն էլ՝ համաձայնութեան նշան:

Երբեք թում է, թէ սատանայի իշխանութեան տարիներում ենք ապրում, չգիտենք թէ ով է ճիշդ, ով սխալ, մէկին որ հերոս էինք իմանում, դարձաւ դաւաճան եւ յաճախ էլ լսում եմ, որ Հայաստանի ողբերգութիւնը հայի օտարամոլութեան մէջ է: Այնինչ, ամէն մի նորմալ մարդ առաջին հերթին կարիք ունի արդարութեան, որի համար փող էլ պէտք չէ, վերաբերմունք է պէտք, որի չգոյութեանը բախուելով է հայր գաղթել: Պարոյր Մեակն ասում էր, որ ազնուութիւնն այն է միայն, որ չի փոխում՝ ոնց էլ շուռ տաս: Նա մի ճերմակ երես ունի, ոչ թէ եօթ-ութ գունեղ աստառ:

Այսօր աշխարհում տեղի ունեցող մեծ պայքարում մեր ամենահզօր զենքը ոչ թէ հրթիռներն են, այլ մեր երիտասարդների կրթութիւնը եւ նրանց կարողութիւնը՝ լուծելու վաղուայ բարդ խնդիրները Այս մասին ԱՄՆ նախագահ Չոն Էնեթանի խօսել է դեռեւս 1961 թուականին՝ Կակարիքի տիեզերք բռնելուց յետոյ: Նա հասկացաւ, որ երկիրը հզօր չէ իր իրքիներով, երկիրը հզօր է իր կրթական մակարդակով: Ի՞նչ է, անկախ Հայաստանի դեկավարութեանը յայտնի չէ՞ր այս ճշմարտութիւնը: Ի հարկէ յայտնի էր, բայց քանդեցին երկրի կրթական համակարգը, երբեմնի ամենակրթուած ազգերի առաջատարներից մէկը, այսօր արդէն անգրագիտութեան մակարդակով է առաջատարների շարքերում, եթէ ոչ առաջինը: Կրթական համակարգի զարգացման ծրագիրը ընդամենը մէկ նախադասութիւն էր, արժանապատիւ աշխատավարձ, արժանապատիւ մանկավարժներին: Մտացում է, որ նրանք տեղեակ չէին նաեւ Իսրայէլի վարչապետ Կուլտա Մայրիի խօսքերից՝ եթէ ուզում էք ունենալ ուժեղ պետութիւն ապա, ուսուցչի, բժշկի եւ գինորակների մասնագիտութիւնները ամենայնպէս անհրաժեշտ է ամենավարձատրուող դարձնել: Արեք այնպէս, որ նրանք լինեն հասարակութեան էլիտան, եւ այդ ժամանակ դուք կ'ունենաք հզօր պետութիւն: Թէ չէ՝ զարմանում ենք, որ ունենք մնաւ պետութիւն:


Ըստ քուանտային ֆիզիկայի, տիեզերքն աւելորդ «ծախսեր» չի անում, մեր կեանքում հանդիպած ամէն մի մարդ իր առաքելութիւնն ունի եւ մեր պապերի ասած, ճակատագրից չես փախչի, մտքի գիտական բացատրութիւնն է: Ոչ ոք չի գալիս պատահական, գալիս են մեր հոգեկերտուածքը էլ աւելի բարձրացնելու: Հաւատացէք ինչքան էլ վատը թուայ, ինչքան էլ ոմանց կարծիքով թունաւոր լինի, նա ընդամենը կատարում է տիեզերքի կողմից իրեն տրուած իր դերը: Գիտութեան հզօր զարգացումն էլ վերջապէս դրեց պատմական կեղծիքներին: Եւ ժամանակակից գենետիկական հետազոտութիւնները (DNA-genealogy) բացայայտում են Մերձատր Արեւելի եւ Կովկասի ժողովուրդների մասին ողջ ճշմարտութիւնը:

Այսպէս, Current Biology եւ այլ հեղինակատր ամսագրերի հետազոտութիւնների համաձայն՝ հայերը հանդիսանում են Հայկական լեռնաշխարհի բնիկ տեղերը: «Հայերի գենետիկական կողը գրեթէ անփոփոխ է վերջին 8000 տարիների ընթացքում: Մենք չենք եկել ու չենք գնացել. մենք միշտ եղել ենք այստեղ»: Հայերը եզակի ժողովուրդ են, որոնց գենետիկական ինքնութիւնը ձեւաւորուել է դեռ նեոլիթեան դարաշրջանում եւ պահպանուել առանց խոշոր խառնուրդների:

Համեմատութեան համար նշենք, որ հրեաների գենետիկական հիմքը ձեւաւորուել է Լեւանտում մօտ 3000-3500 տարի առաջ: Չնայած դարաւոր

սփիւռքին՝ նրանք պահպանել են իրենց Մերձատրաբելեւեան արմատները: Գենետիկական ապացուցում է աստուածաշնչեան ժամանակների կապը ժամանակակից հրեաների հետ:

Այդ ուսումնասիրութիւնների համաձայն, Թուրքիայի բնակիչների 80-85% ձուլուած տեղացիներ են: Սա ամենաաղմկահարոյց փաստն է: Ժամանակակից Թուրքիայի բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը (80-85%) գենետիկօրէն կապ չունի Միջին Ասիայի թուրքական ցեղերի հետ: Թուրքիայի այսօրուայ բնակիչը գենետիկօրէն իսլամացւած եւ լեզուափոխուած բնիկն է: Ասել է թէ գենետիկօրէն նրանք ասիմիլացուած հայեր են, յոյներ, խեթեր եւ ասորիներ, որոնց նախնիները ստիպողաբար ընդունել են թուրքական լեզուն եւ կրօնը XI դարից յետոյ: Իսկական թուրքական (կեղոնասիական) արիւնը նրանց մէջ կազմում է ընդամենը 10-15%: Ինչ վերաբերում է Կովկասեան քաքարներին. որպէս էթնոս՝ «ատրպէյճանցի» տերմինը յօրինուել է միայն 20-րդ դարի սկզբին: Գենետիկօրէն նրանք եւս հանդիսանում են տարբեր տեղական ցեղերի (ալպանացիների, պարսիկների եւ հայերի) խառնուրդ, որոնք ընդունել են թուրքական բարբառները:



Այնպէս որ, պատմութիւնը կարելի է վերագրել, բայց ԴՆԹ-ն փոխել հնարաւոր չէ: Մենք՝ հայերս, ապրում ենք մեր պապերի հողի վրայ, որտեղ մեր գենետիկական հետքը թողնուած է արդէն 80 հարիւրամեակ: Կեանքի մաքրութիւնը մեզ դարձնում է եւ՛ ամենաաղքատը, եւ՛ ամենախոցելին, եւ՛ ամենահարուստը, եւ՛ ամենաուժեղը: Ներկայիս հայկական իշխանութիւնների իմաստագուրկ եւ բովանդակութեամբ վտանգաւոր քարոզական գաղափարներից մէկն այն է, թէ իբր հայ ժողովուրդն իր ամբողջ պատմութեան ընթացքում «փնտռել» է Հայրենիքը, եւ անհա 2018 թուականին նրանք, ինչպէս ասում են՝ «բոլորը սպիտակ հագած եւ վառուղ աչքերով», եկել ու պարզել են, որ Հայրենիքը վերջապէս գտնուած է: Իսկ մնացած ամէն ինչը, իբր, Հայրենիք չէր, այլ ընդամենը Հայրենիքի որոնումներ: Սա փիլիսոփա-մատերիալիստների տարաբնոյք, իրարից կտրուած մտքերի, հաքիալոգայի սիրահարների, «կարմիր կիսմերների» երկրպագուների մի տարօրինակ խառնուրդ է, եւ ամբողջ այս զառանգանքը խիտ խառնուած է հակահայկական, աւելի ճիշդ՝ աղբրեջանակակ քարոզչութեամբ, նոյնիսկ «Հայրենիքի յայտնաբերման» առիթով երգեր գրուեցին եւ կատարուեցին: Սա նման է խելագարի գառանցանքի, որն արուած է արդարացնելու Արցախը յանձնելը, հայկական ինքնութիւնից ու ազգային խորհրդանիշներից հրաժարուելը եւ այլն: Այնինչ, հայերի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է, Միջագետքը եւ Հարաւային Կովկասը, իսկ հայերի ձեւաւորումը որպէս էթնոքաղաքական միաւոր իրենց Հայրենիքում տեղի է ունեցել մ.թ.ա. VIII դարից մինչեւ մ.թ.ա. VI դարը: Աւելացնենք, որ ասեն. Սփիւռքի հայերը, որոնց թիւը երեք-չորս անգամ գերազանցում է Հայաստանի բնակչութեանը, իրենց Հայրենիք են համարում Հայաստանի Հանրապետութիւնը, Արեւմտեան Հայաստանը եւ Արցախի Հանրապետութիւնը: Այսինքն՝ հայերը երբեք, վերջին մի քանի հազար տարիների ընթացքում, չեն փնտռել Հայրենիք եւ չեն խալիսափել իրենց ինքնութեան որոնումների մէջ: Միանգամայն տրամաբանական հարց է առաջանում. եթէ բոլոր հայերի համար Հայրենիքի որոնման հարցը չի եղել եւ չկայ, քանի որ հայերը համարել, համարում են եւ շարունակելու են համարել իրենց Հայրենիքը Հայաստանը, ապա ո՞ր «նոր հայրենիքն» են յանկարծ իրենց համար գտել Հայաստանի իշխանութիւնները: Ես, անկեղծ ասած, չգիտեմ: Բայց փաստերի եւ տրամաբանութեան վրայ հիմնուելով կարելի է վստահօրէն ասել, որ իրենց «գտնուած Հայրենիքը» հաստատ Հայաստանը չէ:

25.02.2026, Երեւան

Խմբագրութեան համակարգող՝	Գոկո. Արշալիր Կեօնճեան (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Սիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ Անտիբեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրուօ)
Զաւէն Գրիգորեան	(Աթէնք)
Վաչէ Սեմերճեան	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc.	
755 Mt. Auburn Street	
Watertown, MA 02472 U.S.A.	
Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com	
Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ՄԵԾ ՊԱՀՈՑ ՀՐԶԱՆԻՆ ԻՆՉ ՊԻՏԻ ԸՆԵՍ ԶԱԲԱԿՆԵՐՈՒԴ ՀԱՄԱՐ

ԸՆԶԱԿ Ա. ՔՀՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Հայ Եկեղեցույ մեջ այս տարի Մեծ Պահոց շրջանը սկիզբ առաւ երկուշաբթի, Փետրուարի 16-ին: Այս մասին անցնող 47-ը քահանայազործութեան տարիներու տարբեր խորհրդածութիւնները քաճ են ծխականներու հետ ու նաեւ քարոզած: Շատ յաճախ լսած են ծխականներէն թէ պահեցողութեան այս շրջանին հեռու պիտի մնան մտեղէն ու այլ կենդանիներէ ստացուած ուսելիքներէն ու ճարպ պարունակող կերակուրներէ ու պիտի ջանան եկեղեցի յաճախել հոգեւորապէս արեւի պատրաստուելու: Այլ խօսքով, յանդիման ջանքերով ու ճիշդ ձեւով հոգ պիտի տանին իրենց մարմնաւոր ու հոգեւոր կարիքներուն: Սքանչելի է ու գովելի:



Բայց գրութեամբս պիտի հրաւիրէի մեր հայ մայրերուն ու հայրերուն, որպէսզի իրենց տունները փոքր «եկեղեցիներու» վերածեն այս Մեծ Պահոց շրջանին, եթէ մինչեւ հիմա չեն կարողացած ընել:

Միտելի ծնողներ, քաջատէղեակ ըլլալով ձեր բոլորի բազմազբաղ կենցաղին ու բազմատեսակ գոհողութեանց, այնուամենայնիւ պիտի յիշեցնէի, որ Հայ տունը դարձնելով եղած է փոքր Հայ Եկեղեցի մը, ուր մեր զաւակները սորված են Մեսրոպեան տառերով գրել Տէրունական ու մեր սուրբերէն ժառանգած աղօթքները, Աստուածաշնչեան Սաղմոսները, Տասնաբանեան ու Քրիստոսի ոսկի պատուիրանները: Օրական 15-20 վայրկեան ձեր զաւակներուն հետ մեր եկեղեցույ ուսուցումները փոխանցելը ձեր զաւակներուն ամենէն քանակազին նուէրը պիտի ըլլայ անոնց: Այս ուղղութեամբ Արեւելեան Թեմիս Առաջնորդարանի կրթական բաժանմունքները հսկայական աշխատանք տարած են իրենց հրատարակութիւններով տասնամեակներէ ի վեր ու երկրէտարանի: Ձեզի կը մնայ օգտուիլ անոնցմէ ձեր տեղույն Հայ Եկեղեցույ միջոցաւ: Ինչպէս վերելք նշեցի, գուցէ շատերդ արդէն կ'ընէք: Տասնեակ հազարներու հասնող երեխաներ ու պատանիներ ունինք մեր թեմին մեջ, որոնք դժբախտաբար ինչ-ինչ պատճառներով նոյնիսկ իրենց եկեղեցույ շաբաթական կիրակնօրեայ եւ Հայ գոյգ դպրոցներուն մաս չեն կազմեր: Տարիներու հոփուական փորձառութենէ գիտեմ, թէ ինչպէս շատ մը չափահաս երիտասարդներ ներկայութեանս մեղադրած են իրենց ծնողները, որոնք առիթը չեն ընծայած, որպէսզի իրենք ես սորվին այն ամէնը, որ մերն են: Այսօրուան հաղորդակցութեանց ու դաստիարակութեանց նորագոյն միջոցները մեծապէս կ'օգնեն ու կը դիւրացնեն ծնողաց գործը: Չաւակդ քու ձեռքիդ մեջ է առաւելագոյնը մինչեւ 15-16 տարեկանը: Անկէ ետք, գէթ ատլանտեանի այս ափերուն դուր եւ ես լաւ գիտեմք, թէ ինչպէս արեւի կը դժուարանայ իրենց ուշադրութիւնը (չըսելու համար նաեւ իրենց հնազանդութիւնն ու գործակցութիւնը) ունենալու:

Հոգեւոր ու ազգային արժեքներու ու ժառանգութեանց դաստիարակութիւնը ճիշդ չէ ձգել մեր եկեղեցիներու շաբաթական մէկ կամ երկու ժամուան դասընթացներուն, այն ալ եթէ զիրենք կանոնաւորապէս ու ճիշդ ժամանակին բերեն ծնողները: Ահա թէ ինչ բարիք կրնաք ընել ձեր զաւակներուն, որպէս ծնողներ, եթէ կարենաք ձեր տունը վերածել ամենօրեայ փոքր Հայ Եկեղեցիի մը: Ձեր փոքր գոհողութենէն մեծապէս պիտի օգտուին ձեր զաւակները, որոնցմով նախ եւ առաջ դուք պիտի հպարտանաք: Վստահ եղէք, որ անոնք ցկեանս երախտապարտ պիտի ըլլան ձեզ:

Շատ յաճախ ըսուած է, թէ Պահոց այս շրջանը աղօթքի եւ ապաշխարութեան եւ շրջան մըն է: Ճիշդ է: Բայց Քրիստոնեային համար այդ երկուքը ճիշդ են նաեւ տարուան իւրաքանչիւր օրուան համար: Յովհան Ոսկերեան՝ 4-րդ դարի բոլոր եկեղեցիներէն մեծապէս յարգուած այս սուրբը գեղեցկօրէն ըսած է. «Մեծ բարիք է աղօթքը երբ այն կ'ըլլայ երախտագիտութեան զգացումով, եւ երբ մենք կը սորվինք երախտագիտութիւն յայտնել Աստուծոյ ո՛չ միայն երբ կը ստանանք մեր ուզածները, այլեւ երբ չենք ստանար»: Իսկ ապաշխարութեան մասին նոյն սուրբը ըսած է. «Եթէ միայն քու ապաշխարութեամբդ է, որ մեղքերդ պիտի մաքրուին, իրօք վախճալու պատճառ պէտք է ունենաս: Բայց քանի, որ ապաշխարութեանդ կը միանայ Աստուծոյ ողորմածութիւնը, ապա յուսան, որովհետեւ այն կը գերազանցէ քու չարութեանդ»:

Մեծ Պահոց շրջանն ու ինչու չէ, տարուան իւրաքանչիւր օրը թող Հայ տունը վերածուի փոքր Հայ Եկեղեցույ մը: Պահոց շրջանը միայն որոշ ուսելիքներէ հեռու մնալու մասին չէ, այլ նաեւ մեր հոգեւոր կենցաղը բարելաւելու ու յատկապէս մեր զաւակները ճշմարիտ ու ապրող Հայ եկեղեցույ անդամներ դարձնելու ոսկի առիթ: Միտելի Հայ ծնողներ, այս սրբազան պարտականութիւնը միայն եկեղեցույ հոգեւոր սպասարկներուն եւ մի քանի ուսուցիչներուն ուսերուն մի ձգել, այլ բաժնեկից եղի՛ր զաւակներուդ հոգեւոր, ազգային, մշակոյթի դաստիարակութեան գործին, սկսեալ՝ օրօրոցի տարիներէն:

Միտելի Հայ ծնողք, այս Մեծ Պահոց շրջանին ի՞նչ պիտի ընես զաւակներուդ համար:

Թրամպր, Փետրուար 19, 2026

ՓՈՒՓԻՏՈՒ ԿԵՂՐՈՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԻ ՄԻՋԵՒ ԿԱՔՈՒԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ յՈՒՇԱԳԻՐ

2026 թուականի փետրուարի 13-18-ը Հայաստանի Հանրապետութիւն է այցելել Փոմփիտու կեղրոնի նախագահ Լորան Լը Պոնը: Այցի առանցքային նպատակը Հայաստանի ազգային պատկերասրահի եւ Ժորժ Փոմփիտու արուեստի եւ մշակոյթի ազգային կենտրոնի միջեւ համագործակցութեան յուշագրի ստորագրումն էր՝ երկարաժամկէտ գործընկերութեան ձեւակերպմամբ:



Փոմփիտու կեղրոնի պատուիրակութիւնն այցելել է Հայաստանի մշակութային եւ կրթական հաստատութիւններ, այդ թուում՝ Հայաստանի ազգային պատկերասրահ, Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր եւ քանգարան-ինստիտուտ, Մատենադարան, Հայաստանի պատմութեան քանգարան, Գաֆէսճեան արուեստի կենտրոն, ինչպէս նաեւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգութեան ցանկում ընդգրկուած մի շարք յուշարձաններ:



Փետրուարի 17-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարութիւնում տեղի ունեցաւ հանդիպում ՀՀ Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարար Ժամնա Անդրեասեանի եւ Փոմփիտու կեղրոնի նախագահ Լորան Լը Պոնի միջեւ, որի ընթացքում քննարկուեցին ապագայ համագործակցութեան ծրագրերը: Հանդիպման շրջանակում Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրէն Մարինա Յակոբեանը եւ Փոմփիտու կեղրոնի նախագահ Լորան Լը Պոնը ստորագրեցին համագործակցութեան յուշագիր Հայաստանի ազգային պատկերասրահի եւ Փոմփիտու կեղրոնի միջեւ: Հանդիպմանը եւ ստորագրման արարողութեանը ներկայ էին Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետութեան դեսպան Օլիվիէ Տրոքիմոնի, ԿԳՄՍ փոխնախարարներ Ալֆրետ Քոչարեանը եւ Արթուր Մարտիրոսեանը: Ստորագրուած յուշագրով կողմերը վերահաստատեցին երկարաժամկէտ եւ կառուցողական համագործակցութեան իրենց յանձնառութիւնը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԳԻԾԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ի

ԱՀԱՐՈՆ ՇԵՐՏԸՄԵԱՆ

Հայաստան այսօր կեցած է քաղաքական ճգնաժամի եւ բարոյական փորձութեան առջեւ: Երբ իշխանութիւնը կը սահմանափակէ հոգեւորականներու ազատ տեղաշարժը եւ քրեական մեղադրանքներու ստուերին տակ կը դնէ ազգային եկեղեցւոյ գլուխը, հարցը այլեւս դուրս կ'ելլէ անձերու կամ կուսակցութիւններու սահմաններէն. ան կը դառնայ պետական մտածողութեան, իշխանութեան սահմաններու եւ ազգային ինքնութեան տագնապ:

Հայ Եկեղեցին սրբութիւն է հայ ժողովուրդին համար: Ան լոկ կրօնական կառոյց չէ, այլեւ մեր պատմական յիշողութեան, ցեղասպանութենէն վերապրումի, պետականութեան բացակայութեան պայմաններու տակ դարերու գոյատեւման կենդանի վկայութիւնը: Ոչ մէկ իշխանութիւն, որքան ալ ժողովուրդին կողմէ ըլլայ, իրաւունք ունի միջամտելու Հայ Եկեղեցւոյ ներքին կառոյցներուն, կամ գահակալական հարցերուն: Հայաստանի սահմանադրութիւնը շատ յստակ է: Այդ իրաւունքը բացառապէս վերապահուած է եկեղեցւոյ համապատասխան մարմիններուն:

Դժբախտաբար այս զարգացումները տեղի կ'ունենան միջազգային մարդասիրական եւ ժողովրդավարական կառոյցներու աչքին առջեւ: Քար լռութիւն, որովհետեւ իշխանութիւններու նախաձեռնած «բարեկարգութիւն»ներուն ետին պահուած են Արեւմուտքը յուզող քաղաքական ծրագիրներ...: Արեւմուտքը, որ յաճախ կը խօսի իրաւունքներու եւ ազատութիւններու մասին, յաճախ կը լռէ իր աշխարհաքաղաքական շահերը նկատի ունենալով: Երբ արտաքին աջակցութիւնը կը դառնայ քաղաքական անտարբերութեան քնարեր դեղ, ներքին տագնապները կը բազմանան, բեւեռացումը ինքնաբերաբար կը խորանայ հասարակութեան մէջ:

Քննադատութիւնը կը դիտուի իբրեւ թշնամանք, տարակարծութիւնը՝ դաւաճանութիւն, իսկ լռութիւնը կը դառնայ «խտհեմութիւն»: Լռութիւնը մեղսակցութիւն է: Երբ քաղաքացիական հասարակութիւնը, մտաւորականութիւնը, կուսակցութիւնները եւ հեղինակաւոր դէմքեր լռութիւն կը պահեն, կը նախընտրեն սպասել, ժամանակ չափի կամ չներգրաւուիլ, հակադրութիւններով յղի իրավիճակը աւելի եւս կրնայ խորանալ եւ ներքին բախումներու վտանգ ստեղծել:

Փաստօրէն իշխանութիւններու քայլերուն չափ մտահոգիչ եւ վտանգաւոր է ժողովուրդին անտարբերութիւնը: Երբ անարդարութիւնը կը դիտուի իբրեւ

սովորական երեւոյթ, երբ «ինձի չի վերաբերիր» մտածողութիւնը կը դառնայ համազգային հոգեբանութիւն, այս արդէն պետութեան քայքայումի ազդանշանն է:

Այսօր Հայաստանի մէջ ձեւաւորուած է վտանգաւոր հոգեբանութիւն՝ «Տեսնենք ինչ կ'ըլլայ», «Ինձի չի վերաբերիր», «Ժամանակը կը լուծէ»:

Ո՛չ: Ժամանակը ոչինչ կը լուծէ, երբ արդարութիւնը կը լռէ: Անտարբերութիւնը բռնատիրութեան առաջին եւ ամենավստահելի դաշնակիցն է:

Ժողովուրդը մը կրնայ պարտութիւն կրել պատերազմի դաշտին մէջ, բայց ներքին պառակտումները բաւարար են քայքայելու որեւէ պետութիւն:

Հայաստան արդէն անցած է ծանր պատերազմէ, տարածքային կորուստներէ եւ խոր հասարակական ցնցումներէ:

Քաղաքական նպատակներով արհեստական բեւեռացումներու ստեղծումը՝ եկեղեցւոյ դէմ հակադրութիւնը, ապօրէն եւ անտեղի ձեռքարկութիւնները, կը խարխլեն ազգային միասնականութեան հիմքերը:

Պետութիւնը մէկ անձ չէ, ոչ ալ ժամանակաւոր պաշտօններու հանրագումար: Պետութիւնը ժողովուրդի կամքն է, անոր արժանապատուութիւնը եւ ապագան:

Երբ ազգային սրբութիւնները կը դառնան քաղաքական հակամարտութեան գործիք, երբ սպառնալիքը կը փոխարինէ երկխօսութեան, երբ քննադատութիւնը լռութեան կը փորձուի մատնել — այդ պահուն լռելը դիրքորոշում է: Եւ այդ դիրքորոշումը պատմութիւնը կ'արձանագրէ իբրեւ մեղսակցութիւն:

Օրէնքը պէտք է կիրառուի թափանցիկ, հիմնաւորուած եւ ապաքաղաքական երաշխիքներով: Բանակը, անվտանգութեան մարմինները եւ ոստիկանութիւնը պէտք է գործեն օրէնքի սահմաններուն մէջ՝ անոր վերահսկողութեան տակ, ոչ՝ անձնական ենթակայութեամբ: Սա ժողովրդավարական կառավարման հիմնաքարն է:

Քաղաքական միջամտութիւնները լրջօրէն կը խանգարեն եւ կը հեղինակազրկեն երկրին իրաւական համակարգը: Հայաստան ըստ սահմանադրութեան, աշխարհիկ պետութիւն է, բայց Հայ Առաքելական եկեղեցին առանձնապատուկ դեր ունեցած է մեր ազգային ինքնութեան մէջ: Հոգեւոր առաջնորդի նկատմամբ սահմանափակումները բնականաբար լայն արձագանգ պիտի գտնեն: Ի վերջոյ, եկեղեցին իշխանութիւններու գրասենեակը չէ: Իշխանութեան հասցէին քննադատութիւնը ժողովրդավարութեան բնական բաղադրիչն է:

Եթէ հասարակութեան մէջ ձեւաւորուի մթնոլորտ, ուր քննադատութիւնը իբրեւ թշնամանք դիտուի, ան պիտի խորացնէ բեւեռացումը:

Այս բոլորը վերջ մը պիտի ունենան անշուշտ: Սակայն հարցը այն է, թէ այդ վերջը ինչ գնով պիտի գայ: Պատմութիւնը բազմաթիւ օրինակներ ունի, ուր իշխանութեան եւ հեղինակաւոր կառոյցներու բախումը աւարտած է ոչ թէ բարեփոխութիւններով, այլ պետութեան թուլացումով եւ ժողովուրդի տառապանքով: Որպէսզի չկրկնուին նման տխուր յիշատակներ, անհրաժեշտ է քաղաքական հասունութիւն, հաստատութիւններու, կառոյցներու միջեւ հաւասարակշռութեան պահպանում եւ ազգային խտհեմութիւն:

Այսօր աւելի քան երբեք անհրաժեշտ է յստակացնել՝ պետութիւնը աշխարհիկ է, բայց ոչ՝ հակաեկեղեցական, եկեղեցին ազգային է, բայց ոչ՝ կուսակցական, քննադատութիւնը իրաւունք է, ոչ՝ յանցանք:

Հայ ժողովուրդը կը գտնուի ճակատագրական օրերու առջեւ:

Պահը կը պահանջէ գիտակից ձայն, պատասխանատուութիւն եւ արժանապատիւ կեցումաձք:

Երբ լռութիւնը եւ անտարբերութիւնը մշակոյթի վերածուին ազատութիւնը դանդաղօրէն կը դառնայ յիշատակ:

Պէյրութ

ԹԷԲԷԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԵԾԱԳՈՅՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԱՍՆԱԾԻՒԼ
TEKEYAN CULTURAL ASSOCIATION
METRO LOS ANGELES CHAPTER

KEF TIME LA



FEATURING:

ANTRANIG KZIRIAN
Oud & Vocals

YERVAND KALAJIAN
Violin

MHER MNATSAKANYAN
Clarinet & Duduk

VIK MOMJIAN
Bass

GEORGE BILEZIKJIAN
Dumbeg

SATURDAY, APRIL 11, 2026
TEKEYAN CULTURAL ASSOCIATION BESHGETURIAN CENTER
1901 N. ALLEN AVENUE, ALTADENA, CA 91001

DOORS OPEN: 6:30 PM • DINNER: 7 PM • LIVE MUSIC: 8 PM
CATERING BY CAROUSEL RESTAURANT HOLLYWOOD
INCLUDES DINNER, DRINKS AND ENTERTAINMENT

\$125 PER PERSON
TABLES OF 10 - NO TICKETS WILL BE SOLD AT THE DOOR
FOR INFO: CALL/TEXT 818.730.1100 ZELLE: INFO@TEKEYANLA.ORG

 @TEKEYANLA

ՈՒՇԱԳԻՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿԻ Շաբաթաթերթը

կարելի է կարդալ
www.baikarweekly.com
կայքէջով

ԳԵՐՄԱՆԱՑԻ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԴԻՒԱՆԱԳԵՏՆԵՐՈՒ ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻՆ ՄԷՋ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՀԱՏԵԱՆ

Վոլֆկանկ Կուսթ՝ գերմանացի լրագրող էր պատմաբան պատահականօրեն կը ծանօթանայ Հայոց Ցեղասպանության. 1992-ին ան կը կարդայ Ժազ Տեր Ալեքսանեանի «Le ciel nait noir sur l’Euphrate» («Եփրատի Վրայ Երկինքը Մեռ Էր») ֆրանսերէն գիրքը (սոյն յուշագրութեան հայերէն ամփոփումը տես հատորաշարքիս Բ. գիրքը, էջ 15 – Յ. Ի.): Կուսթ շատ կը զարմանայ առաջին անգամ կարդալով հայու մը տառապանքին մասին. մինչեւ այն ատեն իմացած էր միայն հրեաներու ողջակիզման մասին:



Հայոց Ցեղասպանութեան հարցին մասին նախ մամուլով կ’արծարծէ, ապա իբրև ուսումնասիրութիւն լոյս կ’ընծայէ «Հայերի Ցեղասպանութիւնը 1915-1916 – Գերմանիոյ Արտաքին Գործերի Նախարարութեան Քաղաքական Արխիւի Փաստաթղթերից» (The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives 1915-1916) հատորը: Գիրքին հայերէնի թարգմանիչը՝ Ռուզան Պորիսի Եորտանեան կ’ըսէ, թէ մինչեւ գիրքի հրատարակութեան տարին՝ 2005 թուականը, Հայկական Հարցը Գերմանիոյ հասարակութեան յայտնի չէր պէտք եղած չափով: Այս պատճառաւ Վոլֆկանկ Կուսթ հարկադրուած է նկարագրելու պատմական փաստերը եւ միայն անկէ ետք ընելու իր ընդհանրացումները:

Էռնսթ Չոմմեր՝ գերմանացի պատմաբանը կը նշէ, թէ Հայոց Ցեղասպանութիւնը ամօթանքն է նաեւ ողջ Եւրոպայի, որ իր անտարբերութեամբ քաջալերեց ցեղասպանը: Պատասխանատուութիւնը մեծ է մանաւանդ քայգերական Գերմանիոյ, որ մեղքի մեծ բաժին ունի մարդկութեան դէմ այս մեծագոյն ոճիրին իրականացումը թոյլ տալու համար: Աւելին՝ գերմանացի պատմաբաններ անտեսեցան թուրքերու գործած ոճիրներուն: 1914-1923-ին եւ նոյնիսկ անելի ետք, Գերմանիոյ իշխանութիւնները ուշի ուշով կը հետեւեին մամուլին, որպէսզի գերմանացի ժողովուրդը անտեղեակ մնար հայ ժողովուրդին դէմ գործուած եւ գործուող ոճիրներէն ու անմարդկային բռնութիւններէն: 1917-ին Գերմանիոյ գրաքննիչ ատենադ լրատուական բոլոր միջոցներուն կը հրահանգէ. «Լաւագոյնը կը լինի հայերի մասին լռել»:

Վերոյիշեալ երկու փաստագրութիւնները, միացած ցարդ յայտնաբերուած բազմահազար վաւերաթուղթերուն, յստակօրէն կը հաստատեն, որ Գերմանիա ոչ միայն մեղսակից է Օսմանեան Պետութեան գործած Հայոց Ցեղասպանութեան, այլ նաեւ անոր կանխամտածման ահաւոր ոճիրին:

Անկարելի է քաղաքականութեան մէջ պատահականութիւն տեսնել: Ամեն բան նախապէս ձեռնարկուած չափուած եւ ծրագրուած էր թուրքերու եւ գերմանացիներու կողմէ: Իսկ գերմանացի դիւանագետներու արարքներն ալ բոլորովին տարբեր են գերմանացի մտաւորականներու կեցուածքներէն:

Հայոց Ցեղասպանութեան դժնդակ օրերուն Գերմանիոյ մէջ իշխանութիւնը մամուլը անտեղեակ կը պահէր Հայաստանի եւ Կիլիկիոյ իրադարձութիւններէն, սուտ ու երեւակայածին լուրերով կը սնուցէր զայն, թուրքերու գործած բարբարոսութիւններուն պաշտպան կանգնելով: Գերմանացիներէն միայն շատ քիչեր իրագրէր դարձած էին իրականութեան: Անոնցմէ են Եոհաննէս Լեփսիուս եւ Էռնսթ Չոմմեր, որոնք իրենց ակնատեսի վկայութիւնները գրի առած ու հրատարակած են: Երբ թուրքերը հայեր կը կոտորէին վայրագօրէն, նոյն պահուն գերմանական մամուլը լայն տեղ կու տար թրքական կառավարութեան մասին ապակողմնորոշող տեղեկութիւններու, որոնք սահմանը անցնելով, շատ անգամ թրքասիրութիւն կը սերմանէին գերմանացիներու միտքերուն եւ սիրտերուն մէջ: Այս պատճառաւ Գերմանիոյ մէջ հասարակական սխալ կարծիք կը ստեղծուէր:

Թէն գերմանացի պատասխանատուները թուրքերու կողքին հայոց դէմ կը գործէին ոյժի արամաբանութեամբ եւ հզօրի հոգեբանութեամբ, այդուհանդերձ անոնք լրջօրէն մտահոգ էին իրենց նկատմամբ հայոց անվատահութեան փաստով եւ կը փորձէին սուտերով ու կեղծիքներով շարքի իրենց թրքասիրական վարուելակերպը: Գերմանիոյ առաջնորդներուն հակահայ կեցուածքները չէին բխէր միայն իրենց երկրի գերագոյն շահերէն, այլեւ քրիստոնէայ աղանդատական ծայրայեղական որոշ խումբերու համոզումէ մը. այս շեղանքները հաճոյք կը զգային տկարն ու իրաւագրկուածը անելի վատ վիճակի մատուցել կամ զանոնք այդպիսի վիճակներու մէջ տեսնելէ ու իրենք զիրենք «կ’արդարացնէին», թէ Աստուած զանոնք այդ վիճակին մատուցելու համար ստեղծած է: Ի դէպ, Արեւմուտքի մէջ եղած են ու այսօր ալ կան աղանդատներ, որոնք աղքատներուն եւ տկարներուն օգնութեան ձեռք բնաւ չեն երկարեր, պատճառաբանելով, թէ Աստուած այդպէս կ’ուզէ: Անոնք նոյնիսկ հարուած մըն ալ իրենք կու տան տկարին՝ եթէ կարենան:

Դժբախտաբար, հիւանդագին մարդոց հոգեբանական բարդոյթները տեղ կը գրաւեն անոնց սեփական կամ խմբակային գերագոյն շահերու հետապնդման կողքին ու մեծ դեր կը խաղան անոր մէջ:

Կ. Պոլսոյ մէջ Գերմանիոյ դեսպան Հանս ֆոն Վանկենհայմ իր 1915-04-15-DE-002 (տպագրում՝ Գ. Եւ Հ. փաստ. 026/խմբ. Եւ կրճ./- սկզբնաղբիւրը՝ PA-AA/R14085) նամակով իր երկրի ռայխսքանցներ (վարչապետ) Թէոպալտ ֆոն Պեթման-Հոլվեկին կը տեղեկագրէ՝ առաջին համաշխարհային պատերազմի առաջին ամիսներուն Փոքր Ասիոյ ներքին գաւառներուն մէջ մէկ կողմէ հայոց, միւս կողմէ թուրքերու եւ քիւրտերու յարաբերութեան մասին: Ան նկատել կու տայ, թէ երկու կողմերուն միջեւ արդէն իսկ լարուած յարաբերութիւնները անելի եւս կը սրին ու կացութիւնը հետզհետէ կը վատթարանայ: Իր տեղեկութիւնները գետնին վրայ կատարուող իրադարձութիւններէն քաղելով՝ ֆոն Վանկենհայմ կը խոստովանի, թէ հայոց հետապնդումներ եւ հալածանքներ տեղի կ’ունենան, անելցնելով, որ բռնութիւնները հետզհետէ անելի աղմկայարոյց կը դառնան:

Աւելի յառաջ երթալով, ֆոն Վանկենհայմ ուրիշ անհիմն մեղադրանքով մը կ’ամբաստանէ հայերը. ռազմական գործողութիւններու ատեն, հայ զինուորներ իրենց զենքերը իբր թէ ուղղած են թուրքերու դէմ: Հոս կ’արժէ յիշել Եոհաննէս Լեփսիուսի տեղեկագրին մէջ հայոց հաւատարմութեան մասին վկայութիւնը՝ օսմանեան բանակին մէջ կռուող հայ քաղաքացիները լաւ պահածը ցուցաբերած են, օսմանեան ռազմական վարժարանին մէջ թուրքերէ անելի հայեր պահեստի սպայ արձանագրուած են: Անոնք կը փափաքէին գործող բանակին միանալ, բան թղթատարութեամբ զբարդ գրասենեակներու պաշտօնեայ դառնալ: Լեփսիուս կը գրէ. «Երբ պատերազմական նախարար Էնվեր փաշա Կովկասի ճակատէն Փետրուարին Կ. Պոլիս վերադարձաւ, հայոց պատրիարքին իր մասնաւոր գոհունակութիւնը յայտնեց կռիւներու ընթացքին հայ զօրագուններու վարմունքին եւ քաջութեան մասին, որոնք իրենց պարտականութիւններուն մէջ կատարեալ եղած էին»: Էնվեր գովեստով կ’արտայայտուի յատկապէս Օհաննէս չաուշ անունով հայ զինուորի մը մասին, որ վտանգի տագնապալի պահուն իր սպայակոյտը փրկած էր:

Հանս ֆոն Վանկենհայմ հայերն ու թուրքերը հաւասարապէս յանցաւոր կը նկատէ՝ գրելով. «Իրաքանչիւր կողմ միւս կողմի մեղադրանքները հերքում է իբրև անհիմն կամ էլ իրադարձութիւնների մեղքը բարդում է միւս կողմի վրայ» (էջ 32): Այս տեսակի արտայայտութիւններէն իւրաքանչիւր արդար մարդ բնականաբար կ’ընդվզի. իր սեփական հայրենի հողին վրայ դարերով ճնշուած, հալածուած եւ իրաւագրկուած հայ ժողովուրդը տակաւին յանցաւոր է ու պարտաւոր է իր մեղաւորութիւնն ընդունիլ: Անարդարութեան զագաթնակէտն է սա, որ միայն հիւանդագին հոգիներէ կամ անիրաւ արարածներէ կը բխի որպէս մահացու թոյն: Հայոց դէմ թուրքերուն եւ քիւրտերու գործած ու շարունակուող վայրագութիւններուն դիմաց աչք գոցող գերմանացի դիւանագետը՝ կրնա՞ր դէպքերը առարկայականօրէն ներկայացնել իր երկրի դեկավարներուն երբ ինք տեղեակ էր անոնցմէ ու կ’աշխատէր հայ ազգը բնաջնջելու ծրագիրն իրականացնել թուրքերուն հետ:

Այդուհանդերձ, Հանս ֆոն Վանկենհայմ կը խոստովանի, թէ հայերը ապրտամբութեան որեւէ ծրագիր չէին մշակած երբ կ’ըսէ. «Երեւի թէ միայն մի կէտուն կայ համաձայնութիւն (թուրքերու եւ հայերու ըսածներուն մէջ – Յ. Ի.), որ սահմանադրութեան հաստատումից յետոյ հայերը հրաժարուել են յեղափոխական մտքից, եւ դրա համար ոչ մի կազմակերպութիւն չկայ» (էջ 31):

Իր նամակ-գեկուցագիրին ամեն մէկ պարբերութեան մէջ ֆոն Վանկենհայմ կը ջանայ արդարացնել հայոց նկատմամբ թուրքերու գործած վայրագութիւնները. «Անկասկած հիմա Արեւելեան Անատոլիայում առկայ են հայերի դէմ օրինազանցութիւններ ու բռնութիւններ, եւ ընդհանուր առմամբ իրադարձութիւնները հայերը նկարագրել են ճշմարտացի, թեպէտ ինչ որ տեղ չափազանցել են: Խօսքն անելի շատ գրկանքների ու տառապանքների մասին է, որոնցից գերծ չի կարող մնալ ոչ մի պետութիւն՝ նոյնիսկ քաղաքակիրթ երկրներում, բայց միւս դէպքերում մեղքն ընկնում է հայերի վրայ, իսկ իշխանութիւններին վերաբերում է այն յանդիմանութիւնը որ նրանք ժամանակին նախագուշակական միջոցներ չեն ձեռնարկել եւ ուշացումով միջամտել են անտեղի խստութեամբ» (էջ 31):

Մենք՝ հայերս չենք բարարարուած Գերմանիոյ խորհրդարանի՝ Պունտըսթակի Հայասպանութիւնը ճանչնալու առած քայլէն: Դիշո՞ւ է, թէ մեղքին խոստովանութիւնը ներման կէս ճամբան անցնիլ կը նշանակէ – ինչպէս կ’ըսէ առաջը – սակայն մնացեալ կէտը շատ բան կը պահանջէ: Պէտք է Գերմանիա նիւթական հատուցում ընէ հայոց, եւ տարբեր տեսակի ճնշում Թուրքիոյ վրայ՝ ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը եւ հայոց իրաւունքները վերականգնելու: Այս ուղղութեամբ ոչ միայն Գերմանիա, այլեւ բոլոր հզօր պետութիւնները շատ ընելիքներ եւ բարոյական պարտք ունին հայոց նկատմամբ: Ինչ ալ ըլլան պարագաները, ովքեր ալ ըլլան չարիքին մեղսակիցները, հայը միշտ արթուն եւ վճռական պարտի ըլլալ՝ իր իրաւունքները պահանջելու:

Հակառակ վերոյիշեալ փաստերուն աշխարհով մէկ հրապարակման, օրէնք պարտադրելու կոչուած պատասխանատուներ, խաղաղութիւն եւ արդարութիւն հաստատելու համար պաշտօնի կոչուած մարդիկ, քաղաքագետներ, զինուորականներ եւ մանաւանդ Թրքական Հանրապետութեան պատասխանատուները, երես կը դարձնեն ճշմարտութեանն ու կը շարունակեն իրա՛ւ ճշմարտիսին սուտ ըսել:

Պէլքուր

ԹՐԱՄՓ. ՄԱՆՈՒԿԸ՝ ԹԱԳԱԴՈՐԻ ՏԵՍՔԻՆ ՄԷՋ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ՎԱՐՊԱՆ ԹԱՇՆԱՆ

Երկար ժամանակ է վեր կը հետեւիմ ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփի գործունեության, հանրային վարքին եւ ճառախօսության, եւ կ'ուզեմ կիսով իր մասին քանի մը դիտարկումներով, որոնք կը համարեմ գրեթէ անվիճելի՝ յատկապէս իմ կողմէս յարգուած շարք մը մտածողներու վերլուծութիւններուն հետ համադրաբար:

Բառացիօրէն ամէն անգամ, երբ Թրամփ կը խօսի որեւէ մէկուն, այլ անձի մը կամ երկրի մը հետ պատահող բանի մը մասին՝ ան նկատի ունի ինքզինքը:



Թրամփի ուղեղը չի ճանչնար որեւէ այլ անձ կամ առարկայ՝ որպէս իր սեփական անձէն անջատ գոյութիւն ունեցող իրականութիւն: Ուստի, երբ Թրամփ կ'ըսէ՝ «զիս կը մտահոգէ, որ ինչ որ մարդիկ կը հետապնդեն Պիլ Բիլինքընը Էփշթէյնի խնդրով», առիկա ամբողջութեամբ պայմանաւորուած է այն գիտակցութեամբ, որ եթէ Բիլինքընը Էփշթէյնի խնդրով վկայութեան համար ներկայանայ Քոնկրես, ապա անոր հարցաքննութիւնը դուռ պիտի բանայ ԻԲ հարցաքննութեան: Եւ թերեւս Թրամփ իրապէս մտահոգուելու պատճառներ ունի, քանզի գիտէ, որ դեմոկրատ քոնկրեսականները առիթը պիտի չփախցնեն հարցաքննելու Պիլը այն մասին, թէ ինչ գիտէ Էփշթէյնի գործերուն Թրամփի ներգրաւուածութեան մասին, եւ այդ բոլորը արեւցնելու ծանօթ եւ ահաւոր պատմութիւններու արձանագրութեանց:

Ամէն անգամ, երբ Թրամփ կ'ըսէ՝ «այդ լաւ է X-ին համար» կը նշանակէ՝ «այդ լաւ է ինձի համար»: Եթէ ըսէ՝ «այդ վատ է Y-ին համար», ըսել կ'ուզէ՝ «այդ վատ է ինձի համար»: Իրականութեան մէջ, Թրամփ բարդ մարդ մը չէ եւ շատ հեռու է առեղծուած մը ըլլալէն:

Թրամփ կիսա-գրագէտ, զգացական առումով թերզարգացած, մտաւորապէս տկար անձ մըն է, որ չի հասկնար ուրիշ մարդիկը որպէս մարդիկ. ան բառացիօրէն չի կրնար մտաւոր մշակումի եւ մարտողութեան ենթարկել իրմէ դուրս գտնուող մարդոց մտքերը, զգացումները կամ գոյութիւնը: Չի կրնար որովհետեւ չ'ուզէր «ճաշակել» կամ «համտեսել» ուրիշներու գոյութիւնն իսկ:

Ասիկա չեմ ըսեր որպէս վիրաւորանք: Երբեմն բարեկամներս, որոնք շարքին՝ Թրամփի կողմնակիցներ, չեն հասկնար, որ ես չեմ կրնար վիրաւորել այդ անձը, առաւել եւս՝ ատել, այլ պարզապէս կը փորձեմ հասկնալ անոր մտքի գործունեութեան փաստացի, ապացուցելի ձեւը:

Տոնալտ Թրամփի համար՝ մարդիկ իրական չեն: Մեզմէ շատեր անտրամաբանական կը գայրանան, երբ մեր համակարգիչը կը դադրի աշխատելէ, որովհետեւ կը զգանք, թէ «իրաւունք ունինք», որ այդ ոչ մարդկային, անկենդան առարկան աշխատի այնպէս, ինչպէս մենք կ'ուզենք: Թրամփ նոյն ձեւով կը վերաբերի մարդոց, անոնց որոշումներուն եւ իրադարձութիւններուն: Ան չի կրնար ընդունիլ, որ կրնայ գոյութիւն ունենալ բան մը, որ ամբողջովին իր վերահսկողութեան տակ չէ:

Թրամփի համար անտանելի տանջանք մըն է, երբ կը վիրաւորեն զինք կամ կը հակառակին իրեն: Ոչ թէ որովհետեւ ատիկա «ապստամբութիւն» մըն է իր ու իր իմաստութեան եւ առաջնորդութեան դէմ, այլ որովհետեւ անիկա ջորի երես կը հանէ այն իրականութիւնը, թէ գոյութիւն ունին ուրիշ՝ իրմէ զատ այլ մարդիկ: Եւ սա, կը կարծեն, այն բանն է, զոր չի կրնար հանդուրժել. անիկին՝ չի կրնար հանդուրժել, որ սա բան մըն է, որուն մասին ինք ստիպուած պէտք է ըլլայ մտածել: Նման բան երբեք պէտք չէ պատահի:

Թրամփի համար նոյնիսկ այն մշուշոտ գիտակցումը, թէ ուրիշ մարդիկ կրնան իսկապէս մարդիկ ըլլալ, կը նմանի սովորական մարդու մը սարսափին՝ երբ կը մտածէ, թէ տիեզերական աղէտ մը կրնայ հաւանական ըլլալ: Թրամփի համար այլ մարդոց գոյութիւնը եւ պարզ մարդոց համար տիեզերական աղէտին իրական հաւանականութիւնը անտանելի ճշմարտութիւններ են եւ այնքան դուրս են ուղեղի ըմբռնումէն, որ նոյնիսկ անոնց մասին շշուկով խօսակցութիւնը կան ակնթաթթային մտածումը կը խելագարեցնեն: Թրամփ ի վիճակի չէ կրելու այդոց գոյութեան «բեռը» իր կեանքին մէջ:

Իսկ ինչ է կարեկցանքը իրեն համար. Թրամփ մշուշոտ կերպով կը գիտակցի անոր գոյութեան, չի հասկնար զայն, հետեւաբար՝ կ'ատէ զայն եւ կ'ընէ ամէն ինչ՝ ամէն գնով խուսափելու համար անորմէ:

Ահա թէ ինչո՞ւ ան կը վարձէր մարմնավաճառներ, ինչո՞ւ ներքաշուած է սեռական տարբեր ոտնձգութիւններու եւ բռնաբարութեան մեղադրանքներու մէջ եւ թէ ինչո՞ւ անոր դէմ միշտ հնչած են ծանր յանցագործութիւններու պնդումներ՝ ֆինանսական խարդախութիւններէն եւ յանցաւոր խմբաւորումներու հետ տնտեսական կապերէն սկսեալ մինչեւ պետական յեղաշրջման փորձերը: Թրամփի համար ուրիշները առարկաներ են, որոնց նկատմամբ, կամ անելի դիպուկ՝ «վրայ», ինք իրաւունքներ ունի. եւ որքան անելի իշխանութիւն գործադրէ անոնց վրայ ու ստիպէ զանոնք գործել այնպէս, ինչպէս ինք կ'ուզէ՝ այնքան անելի կը վերահաստատէ ու կը պաշտպանէ իր աշխարհայեացքը, թէ իրմէ բացի ոչ ոք գոյութիւն ունի:

Մարդիկ կը նշեն, թէ Թրամփ կը տառապի նարսիսիզմէ: Ասիկա հաւանաբար ճիշդ է, բայց այդ գիտական հասկացութիւնը լիովին չի փոխանցեր այն, ինչ կը փորձեմ ըսել անոր մասին:

Եւ ընդհանրապէս կը խուսափիմ մասնագիտական, այս պարագային՝ բժշկա-հոգեգիտական բառերէն, որովհետեւ նման եզրերու գործածութիւնը յաճախ կը ծառայէ դիւրին պիտակաւորումներու: Անոնք, որոնք խորապէս ծանօթ չեն այդ եզրին, զայն կ'ընկալեն որպէս պարզ վիրաւորանք: Սակայն պարզ ըլլալու համար՝ պէտք է ըսել, որ Թրամփ գրեթէ անկասկածօրէն հիւանդագին նարսիսիստ մըն է: Առանց վիրաւորանքի: Սակայն միայն նարսիսիզմը չէ, որ զինք իրայայտուկ կը դարձնէ: Ակնյայտ է, որ անոր քով առկա են յուրջ ճանաչողական սահմանափակումներ, որոնք մեծապէս կը նուազեցնեն անոր կարողութիւնը հասկնալու այնպիսի պարզ ու մարդկային հասկացութիւններ, ինչպիսին է, դարձեալ, կարեկցանքը:

Պէտք է ընդունիլ, որ նարսիսիստները կամ ընկերատեսցները կրնան զանազան բարձր մտաւոր կարողութիւններ ունենալ եւ ցուցաբերել ռազմավարական մտածողութիւն: Սակայն Թրամփի պարագային խնդիրը միայն կարեկցանքի բացակայութիւնը չէ, այլ նաեւ անոր մտաւոր սահմանափակութիւնը՝ նոյնիսկ անոր գոյութիւնը ճանչնալու համար ընդհանրապէս մարդոց մէջ:

Կարեկցանքը բարդ ճանաչողական գործընթաց մըն է, որ կը պահանջէ մտաւոր «տարածք» եւ ուժ: Թրամփ պարզապէս չունի այդ: Եւ ասիկա արեւին է քան նարցիսիզմը: Սա այն է, որ կը փորձեմ ընդգծել. Թրամփ պարզապէս թերաճ անձ մըն է. անմեղ բառով մը՝ ան երեխայ մըն է:

Ասիկա զինք չի դարձնէր պակաս վտանգաւոր: Ընդհակառակը, ան վտանգաւոր է, որովհետեւ իր մանկական բնոյթը զինք գրաւիչ կը դարձնէ զգացական թուլութիւն ունեցող մարդոց համար:

Բայց ասիկա նաեւ պատճառ մըն է, որ ան ձախողի գրեթէ ամէն բանի մէջ, բացի ընտրուելէն: Անոր եզակի կարողութիւնն է արձագանգ գտնել խոր զգացական խոցելիութիւն ունեցող զանգուածներուն մէջ: Իսկ անկէ դուրս, անոր վարչակազմերը գրեթէ միշտ արագ կը փլուզուին: Որովհետեւ Տոնալտ Թրամփ ունի շատ սահմանափակ մտաւոր կարողութիւններ:

Մարդիկ դժուարութեամբ կ'ընդունին այս պարզ ճշմարտութիւնը, որովհետեւ իրենց աշխարհայեացքը կ'արգիլէ հաւատալ, թէ մէկը կրնայ ըլլալ միլիարատեր եւ նախագահ՝ միաժամանակ ունենալով սահմանափակ մտաւոր կարողութիւններ:

Բայց կրնայ: Եւ պատմութիւնը լեցուն է օրինակներով, ուր ակնյայտօրէն անպատրաստ եւ մտաւորապէս սահմանափակ մարդիկ բարձրացած են իշխանութեան ամենաբարձր դիրքերուն:

Պէյրոթ
24 Փետրուար 2026

ՂԵՍՊԱՆ ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱՄԷՔԵԱՆ ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒԱԾ Է «PELA LEI» ՊԱՏՈՒՅՑ ՄԵՏԱԼՈՎ

Պրագիլիայում՝ Լուսինեանների Ան-ւան Գերագոյն Ռազմական Ինքիշխան Ասպետական Միաբանութեան բարձր հովանու ներքոյ, Դեսպան Սարգիս Օ. Գարամէքեանը հանդիսաւոր արարողութեան ընթացքում պարգեւատրուեց «PELA LEI» պատուոյ մետալով՝ SMOTH MIT-ի պաշտօնական նախաձեռնութեամբ եւ Խոսէ Միկել Նիքոլաու Կոն-զալեսի ինստիտուցիոնալ առաջադրութեամբ: Պատուոյ մետալը շնորհուեց Dr. Carlos Alberto Maciel Romagnoli-ի կողմից՝ 32-րդ Վետերանների Սոցիալիստական Միութեան (Sociedade Veteranos de 32 – MMDC) Կատարող տնօրէնների խորհրդի նախագահի կողմից՝ ի գնահատանք օրէնքի գերակայութեան, պետական ու հայրենասիրական արժեքների պաշտպանութեան եւ հայ-պրագիլական բարեկամութեան ամրապնդման գործում ունեցած ներդրման: Գարամէքեան 20 տարիէ ի վեր ստանձնած է Արմենիա Էքերնա ռատիօժամիու հեռուստաժամի պատասխանատուութիւնը, գործակցաբար արցախցի Ինեսա Սարեանի, որ ֆիտայի է ու պատերազմական բժիշկ: Հանդիսաւոր արարողութեան ասարտին Դեսպան Գարամէքեանը, Մեծ Վարպետ, Վեհապետ Իշխան Արքայազն Արման Աւետիսեանի անունից, յանձնեց «Certificate of Honour» (Պատուոյ վկայական)՝ որպէս խորհրդանիշ հետագայ համագործակցութեան, փոխադարձ յարգանքի եւ ժողովուրդների բարեկամութեան ամրապնդման: Սոյն բարձր պատիւը վկայում է փոխադարձ յարգանքի, ասպետական համերաշխութեան եւ հայ-պրագիլական կապերի ամրութեան մասին՝ SMOTH MIT-ի միջազգային առաքելութեան շրջանակներում:



ԻՆԵՍԱ ԱՍՐԵԱՆ ԳԱՐԱՄԷՔԵԱՆ

ԱԿԱՊԵՆԻԿՈՍ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ 65-ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ

Ժամանակն իր անդադար հոսքով երբեմն անակնկալի է բերում: Գալիս է մի պահ զարմանում ես, թե երբ այսքան մեծացայ, այսքան իրադարձությունների ակնատեսը եղայ, այսքան իրողություններու կենդանի վկան դարձայ: Մովորաբար երբ խօսքը վերաբերում է անցած տարիները գնահատելուն, մարդկանց մեծ մասը վստահաբար ամենատեղի հատուածը համարում է ուսանողական տարիները: Հենց այդ, ուսանողական շրջանից են ճանաչել մերօրեայ լուսագոյն պատմաբաններից պատմական գիտությունների դոկտոր, փրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանին...



2026 թ. փետրուարի 16-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդլայնված գիտական խորհուրդը նուիրում էր մեր օրերի յիբարի վաստակաշատ գիտնական Ա. Մելքոնեանի 65-ամեակին: Առաջին հայեացքից հերթական, պաշտօնական գործընթաց էր, սակայն միայն առաջին հայեացքից: Դահլիճում իրար էին խառնուել փաստերն արձանագրելու, ջերմ շնորհատրանսքեր յղելու եւ յոյզերը դժուար զսպելու ձգտումները:

Բացման խօսքով հանդես եկած փոխտնօրէն Կարէն Խաչատրեանը հակիրճ ներկայացրեց Ա. Մելքոնեանի կենսագրութիւնը եւ նշեց, որ Աշոտ Մելքոնեանը ծնուել է 1961 թուականի փետրուարի 16-ին, Ախալքալաքում, վաստակաւոր լրագրող Աղասի Յարութիւնի Մելքոնեանի ընտանիքում: 1967 թ. ընդունուել է ոսկէ մետալով 1977 թուականին աւարտել է ախալքալաքի դերեճիկ Դեմիքեանի անուան թիւ 4 հայկական միջնակարգ դպրոցը: 1977-1982 թթ. ուսանել է երեւանի պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետում, որն աւարտել է գերազանցութեան դիպլոմով: 1982-1985 թթ. եղել է ասպիրանտ նոյն համալսարանի Հայոց պատմութեան ամբիոնում: 1989 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն «Արեւմտեան Հայաստանի Երզրումի նահանգի հայ ազգաբնակչութիւնը XIX դարի առաջին երեսնամեակին» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1986 թուականի հոկտեմբերից աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտում՝ նախ որպէս լաբորանտ, ապա՝ գիտաշխատող, յետոյ գիտքարտուղար ապա գիտական հարցերով փոխտնօրէն: 2002 թուականի ապրիլի 26-ին պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն «Ջաւախքը XIX դարում եւ XX դարի I քառորդին» թեմայով: 2004 թուականին ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 2006-2014 թթ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ էր: 2014 թուականին Աշոտ Մելքոնեանն ընտրուել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Աշոտ Մելքոնեանը 2002 թուականի յուլիսից ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի տնօրէնն է: Նա գլխավորում է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի գիտական եւ պատմութեան ինստիտուտում գործող 004 Հայոց պատմութեան մասնագիտական խորհուրդները: ԵՊՀ խորհրդի, պատմութեան ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի, Երեւան քաղաքի պատմութեան քանգարանի գիտական խորհուրդների եւ մի շարք գիտական հանդէսների (Պատմաբանասիրական հանդէս, Լրաբեր հասարակական գիտությունների, բանբեր Հայաստանի արխիւների, Կանթեղ, Պատմութիւն եւ մշակոյթ եւ այլն) խմբագրակազմերի անդամ է: Նա 16 գրքի եւ ատելի քան 450 գիտական յօդուածի հեղինակ է: Աշխատութիւնները լոյս են տեսել աշխարհի 14 երկրներում՝ ատելի քան 10 լեզուներով: Գիտական զեկուցումներով հանդէս է եկել աշխարհի շատ երկրներում:

Աշոտ Մելքոնեանի գիտական հետաքրքրութիւնների շրջանակի մէջ մըտնում են արեւմտեան Հայաստանի, հայկական հարցի, հայոց ցեղասպանութեան, Ջաւախքի, պատմութեան, հայ-վրացական յարաբերութիւնների, Հայաստանի պատմական ժողովրդագրութեան հիմնահարցերը: Մելքոնեանի աշխատութիւնները լոյս են տեսել Հայաստանում, Ռուսաստանում, ԱՄՆում, Անգլիայում, Ֆրանսիայում, Վրաստանում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրանում, Արգենթինայում, Հունգարիայում՝ հայերէն, ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն, վրացերէն, պարսկերէն, իսպաներէն, թուրքերէն, հունգարերէն լեզուներով:

Այնուհետեւ շնորհատրական ելոյթով հանդէս եկաւ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Աշոտ Սաղեանը: Ջերմ շնորհատրելով յոբելեարին նա նշեց Ա. Մելքոնեանի վաստակը հայագիտութեան ասպարէզում եւ ընդգծեց նրա քաղաքացիական առողջ ու սքափ կեցուածքը տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

Այնուհետեւ ելոյթներ ունեցան երկարամեայ գործընկերներից հանրագիտարանի գլխատր խմբագիր-տնօրէն Յովհաննէս Այվազեանը, փրոֆեսորներ Էդիկ Մինասեանը, Էդիկ Գեորգեանը, Գեորգ Ստեփանեանը, Վահան Դեռնդեանը, Սուրէն Սարգսեանը եւ այլք: Միմեանց լրացնելով նրանք նշեցին, որ պրոֆեսոր Աշոտ Մելքոնեանը գիտական աշխատանքին զուգահեռ վարում է նաեւ ընդգրկուն մանկավարժական գործունէութիւն: Նա Հայոց պատմութիւն է դասաւանդում Երեւանի պետական համալսարանում, ՀՀ ԳԱԱ մագիստրատուրայում, Խ. Արովեանի անուան մանկավարժական համալսարանում: 2004-2006 թուականներին եղել է նաեւ Երեւանի բժշկական համալսարանի Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ: Նրա ղեկավարութեամբ պաշտպանուել է 16 թեկնածուական ատենախօսութիւն, որոնք նուիրում են Հայաստանի պատմական ժողովրդագրութեան եւ ցեղասպանութեան թեմաներին: Խմբագրել է տասնեակ գիտական աշխատութիւններ: 2010 թուականից Ա. Մելքոնեանը Հայոց պատմութեան եւ մշակոյթի պատմութեան դասախօսութիւնների շարք էր իրականացնում Հայոց բանակում՝ նպատակ ունենալով բարձրացնել հայ զինուորականի պատմաճանաչողական եւ ռազմահայրենասիրական ոգին: Մելքոնեանը զեկուցումներով եւ դասախօսութիւններով հանդէս է եկել մօտ երկու տասնեակ երկրներում կազմակերպուած միջազգային գիտաժողովներում, սփիւռքահայ հասարակութեան առջեւ: Պատմագէտ Ա. Մելքոնեանը 1997-2009 թթ. արեւմտեան Հայաստանում նկարահանած տեսանիւթի հիման վրայ պատրաստել է հեռուստատեսային ֆիլմեր («Կարօտի Երգիր» (2006 թ.), «Արարատ. Հայոց անմահութեան խորհուրդը» (2008 թ.) եւ այլն): 2007 թուականի օգոստոսի 10-ին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ Մերի դաշնագրի օրը, նա բարձրացել է Արարատ լեռան գագաթը, եւ դրա հիման վրայ ստեղծել «Արարատ. Հայոց անմահութեան խորհուրդը» գիրքը եւ ֆիլմը («Տիգրան Մեծ» հրատ., Երեւան, 2008 թ.)՝ նուիրում հայ նոր գրականութեան հիմնադիր, մեծ լուսատրիչ խաչատուր Արովեանի ծննդեան 200-ամեակին (1809 թ.) եւ Դորպատի համալսարանի փրոֆեսոր ֆրիտրիխ Փարրոթի հետ խ. Արովեանի Արարատի գագաթ բարձրանալու 180-ամեակին (1829 թ.):

Իւրաքանչիւր ելոյթ ունեցող ընդգծում էր յոբելեարի բարի ու մարդասէրի, լուսագոյն գործընկերոջ եւ անխնց գիտնականի լուսեղէն կերպարը: Որոշ առումով առանձնացաւ պատմութեան ինստիտուտի առաջատար գիտաշխատող, «Երկիր եւ տարածաշրջան» հանդէսի գիտական խմբագիր, փրոֆեսոր Ս. Սարգսեանի ելոյթը: Նշելով, որ Ա. Մելքոնեանին ճանաչել է ուսանողական տարիներից, Ս. Սարգսեանը շեշտեց յոբելեարին բնութագրող մի քանի յատկանիշներ, որոնց մասին չէր ասուել: Նախ ասուեց, որ Ա. Մելքոնեանը մեծ վաստակի տէր գիտնական լինելով հանդերձ՝ փայլուն ճանապարհի ընկեր է, որի առնաւատչեան մի քանի տարի շարունակ Արցախ ինչպէս նաեւ Պէյրութ այցելութիւններն են: Ս. Սարգսեանը նշեց նաեւ, որ Ա. Մելքոնեանն իր որդու գիտական ղեկավարն է եղել եւ ընդգծում շնորհակալութիւն յայտնեց նրա ղեկավարութեամբ բոլոր ատենախօսութիւն պաշտպանածների կողմից՝ սրտացաւ, խրախուսող, ոգելորդ եւ հիմնախնդրի խրթին ծալքերը լուսագոյնս լուսաբանելու եւ օգնելու համար: Ելոյթի վերջում Ս. Սարգսեանը շեշտեց նաեւ այն մեծ ներդրումը, որն ունեցել է Ա. Մելքոնեանը «Երկիր եւ տարածաշրջան» հանդէսը հիմնելու գործում, ապա ատելացրեց, որ իրենք հպարտ են, որ յոբելեարը հիմնադրման օրուանից խմբագրակազմի անփոփոխ անդամն է:

Ամփոփելով գիտխորհուրդը, Կ. Խաչատրեանը թուարկեց Ա. Մելքոնեանի աշխատութիւնները. Երզրում (Երզրում նահանգի հայ ազգաբնակչութիւնը 19-րդ դարի առաջին երեսնամեակին), Է., 1994, 180 էջ, Հայոց պատմութիւն (դասախօսութիւնների ձեռնարկ), Է., 1998, 277 էջ, Ջաւախք (պատմութեան ուրուագծեր), Է., 1999, 103 էջ, Ջաւախքը 19-րդ դարում եւ 20-րդ դարի առաջին քառորդին, Է., 2003, 543 էջ, Նիւթեր Ախալքալաքի եւ ախալքալաքի դրպրոցների պատմութիւնից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ), Է., 2005, 178 էջ, Մեր դժուար ժամանակների մեծ հայը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեան (կեանքն ու գործը), Է., 2007, 340 էջ, Արարատ. Հայոց անմահութեան խորհուրդը, Է., 2008, 96 էջ, Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.), կազմող՝ Աշոտ Մելքոնեան, Է., 2008, 352 էջ, Հայոց պատմութիւն (Հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը), Է., 2008, 352 էջ, Հայաստանի պատմութեան եւ ժողովրդագրութեան հիմնահարցեր (յօդուածների ժողովածու), Է., 2011, 456 էջ, Հայոց պատմութեան դասերն ու պատգամները (յօդուածների ժողովածու), Է., 2013, 632 էջ, Յեղասպանութիւն եւ հայրենագրական. ճանաչումից հատուցում (յօդուածներ եւ հարցազրոյցներ), Է., 2015, 440 էջ եւ այլն: Այնուհետեւ հպարտութեամբ շեշտեց, որ Ա. Մելքոնեանի անուրանալի վաստակի արդիւնքում ընթերցողի դատին յանձնուեց Հայոց պատմութիւն հիմնարար եւ մնայուն քառահատրեակը:

Խորհրդանշական էր, Ա. Մելքոնեանի համեստութիւնն ու բարի կամեցող լինելու հանգամանքն ընդգծող երեւոյթ էր նաեւ այն, որ իր շնորհակալական խօսքի վերջում տնօրէնի ժամանակաւոր պաշտօնակատար Համօ Սուքիասեանին յանձնեց տնօրէնի աշխատասենեակի ու սեյֆի բանալիներն ու պարտականութիւնները բարեյաջող ի կատար ածելու մարթանքները:

Շնորհատր յոբելեանը, սիրելի Աշոտ Մելքոնեան. ստեղծագործական նոր ձեռքբերումներ, խաղաղ ու ապահով Հայաստան, առողջ ու թոռնիկահարուստ երկար տարիներ...


Երեւան

ԵՐՈՒՍԱԳԵՄԻ «ՄԻՈՆ» ԱՄՍԱԳՐԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԹԻՒԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

«Միոն» ամսագիրը, որ պաշտօնաթերթն է Հայց. Եկեղեցւոյ նուիրապետական շրջապատներէն մէկուն՝ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, տարին գոնէ 3-4 անգամ կ'ուրախացնէ մեզ իր երեւումով:

Բաւական երկար առեւտրէն այլեւս ամսագիր չէ «Միոն»-ը, այլ՝ եռամսեայ կամ քառամսեայ պարբերաթերթ մը, որ հակառակ հայ մամուլը ընկրկեցնող հասարակաց ինչ-ինչ դժուարութիւններու՝ կը շարունակէ լոյսին գալ որակեալ ու բովանդակալից թիւերով: Արդէն, հինգէն իվեր («Միոն»-ի նոր շրջանը կը սկսի 1927-ին), այս ամսագիրը կը կրէ «կրօնական, գրական ու բանասիրական» բնոյթ, ինչպէս կը կարդանք մայր կողմին ու անուանաթերթին վրայ: Կրօնական ու հոգեւոր նիւթերու առընթեր՝ գրական եւ բանասիրական յօդուածներու գոյութիւնը «Միոն»-ի էջերուն մէջ անկասկած որ տարբեր որակ մը կը շահեցնէ այս պարբերականին ու զայն կը վերածէ մտաւորական,-- նաեւ՝ հայագիտական,-- շրջանակներու սիրելի հրատարակութեան մը:



Հաստատած ենք, որ հայկական հանրային բազմաթիւ գրադարաններ, աշխարհի տարբեր ցամաքամասերուն վրայ, ունին եւ գուրգուրանքով կը պահեն «Միոն»-ի հին հաւաքածոները: Ու բանասերներն ալ յաճախ իրենց գլուխը կը հակեն այդ հաւաքածոներուն վրայ եւ կը պեղեն զանոնք թանկարժէք մետաղներու հանքի մը պէս...:

Միով բանի, «Միոն» կը շարունակէ մնալ արժէքաւոր հրատարակութիւն մը եւ խորհրդանիշն ու հայելին՝ Հայ Երուսաղէմին:

Մեր տրամադրութեան տակ է «Միոն»-ի վերջին թիւը, որ կը կրէ «2025, թիւ 8-12, Օգոստոս-Դեկտեմբեր» թուահամարը: Այսինքն, ամսագրային հինգ թիւերու միացեալ ժողովածու մըն է այս: Շուրջ 130 էջ է:

Խմբագրականը կ'արժեքէ մօտ երկու տարիէ իվեր հայաշխարհը յուզող այն նուաստացուցիչ պայքարը, որ դէմ-դիմաց հանած է Հայաստանի իշխանութիւններն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր շրջանակը: «Միոն» յրստակօրէն կանգնած է եկեղեցական կառոյցներուն կողմին ու կը դատապարտէ Հայաստանի քաղաքական վերնախաւին ընթացքը, զայն կը նկատէ կործանարար:

Քանի մը կարեւոր յօդուածներ մեր ուշադրութիւնը կը գրաւեն այս թիւին մէջ:

Ասոնցմէ մին **Նաւասարդ Մարտոյեանի** (կ'ենթադրենք որ ան Անթիլիասի Կիլիկիոյ կաթողիկոսութեան նախկին միաբաններէն մին է, այժմ՝ կարգաբոլոր, փիլիսոփայութեան ու բաղդատական կրօնագիտութեան փրոֆէսօր) յանդուգն ուսումնասիրութիւնն է՝ նախամուսնական սեռային յարաբերութիւններու մասին: Ան լուսարձակ բացած է Աստուածաշունչի որոշ հատուածներուն վրայ՝ պարզելու համար սեռային յարաբերութեան քրիստոնէական ընկալումն ու սահմանումը: Նմանօրինակ նիւթեր, դեռ մօտիկ անցեալին, «թապալտ» կը նկատուէին առհասարակ հայ մամուլին ու մասնատարաբար եկեղեցական պաշտօնաթերթերու կողմէ: Մակայն սա վերջին քանի մը տարիներուն «սեռային» հարցերը այնքա՛ն հրատապ դարձան որ՝ եկեղեցին հարկ զգաց անդրադարձումներ կատարելու ատոնց մասին: Անթիլիասի «Հասկ»-ին մէջ Մակար արք. Աշգարեան քանիցս օրակարգի բերաւ այս զգայուն նիւթը, թարգմանածոյ գիրքեր ալ լոյս ընծայեց այս մասին, վերջերս: Հինա, ահաասիկ, «Միոն»-ն ալ կ'առնէ համարձակ քայլ մը ու իր էջերուն մէջ, ձեռնհաս գրիչով մը, կը պարզէ Աստուածաշունչին ու եկեղեցւոյ ուսուցումները՝ սեռային հարցերու վերաբերեալ: Այս նիւթը անպայման որ պիտի հետաքրքրէ յատկապէս մեր երիտասարդ-երիտասարդուհիները կամ անուամբեան թեկնածու հայորդիները: Ըստ Ն. Մարտոյեանի՝ «սեռային յարաբերութիւնը սիրոյ արտայայտութիւնն է ամուսնութեան խորհուրդին մէջ: Ամուսնութենէն առաջ եւ ամուսնութենէն դուրս տեղի ունեցող սեռային յարաբերութիւնները մաս չեն կազմեր մարդկային բնականօրէն յարաբերութեան: ...Եկեղեցին կը հաստատայ թէ սեռային յարաբերութիւնը Աստուծոյ կողմէ մարդուն տրուած է որպէս միջոց որդեմուտեան, որպէս սիրոյ արտայայտութիւն ամուսնին եւ իր կնոջ միջոց»: Այս այսպէս ըլլալով հանդերձ՝ յօդուածագիրը ինք կը հաստատէ, թէ ըստ վիճակագրական տուեալներու՝ «վերջին տասնամեակին գրեթէ ամբողջովն նախամուսնական յարաբերութիւնները նկատելի աճ արձանագրած են: Այդքան պարագային, անոնց ինքսուն առ հարիւրը նախամուսնական սեռային յարաբերութիւն ունեցած են»...: Ուրեմն, ո՞ր մնաց քրիստոնէական ուսուցումը...: Յօդուածագրին առաջարկն այն է՝ թէ եկեղեցին պէտք է նախամուսնական խրատական յանձնարարական հանդիպումներ կազմակերպէ երիտասարդութեան հետ, նաեւ խթանէ սեռային առողջ դաստիարակութիւնը:

Ներսէս վրդ. Արշեան (որ Հայաստան ծնած երիտասարդ մտաւորական մըն է ու «Միոն»-ի խմբագրութիւնը կը վարէ ներկայիս) գրական ուսումնասիրութեան մը առարկայ դարձուցած է Յովհաննէս Թումանեանի «Բէպի անհունը» քիչ ծանօթ պոէմը, գլխաւորաբար մատնանշելով կեանքի ու մահուան առեղծուածին շուրջ լռեցի բանաստեղծին արտայայտած մտորումները:


ԼԵՐՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ (sharoyanlevon@gmail.com)

Հայաստանէն յօդուածագիր մը՝ **Վարդան Կարապետեան**, իր ուշադրութիւնը սեռեւած է մեծանուն իմաստասէր Շահան Պերպերեանի (1891-1956) գեղագիտական հայեացքներուն վրայ, ցոյց տալով արուեստներու եւ արժէքներու նկատմամբ անոր տեսակետներն ու մօտեցումը: Պերպերեան, ինչպէս պիտի յիշուի, ամբողջ տասնամեակ մը (1934-44) դասուանող էր Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանէն ներս ու իր անունը կապած էր Ս. Յակոբեանց վանքի մշակութային երբեմնի ապրումներուն:

Հայաստանէն այլ յօդուածագիր մը՝ **Մաքեմիկ Խոսրոյեան**, պատկերազարդ ուսումնասիրութեամբ մը ներկայացուցեր է «**Քարանդակ գիւղի վիմագրական ուսումնասիրութեան արդիւնքները**»: Այս գիւղը կը գտնուի եղեր Միւնիքի շրջանին մէջ: Հոն պեղումներու առարկայ դարձեր են գերեզմանաքարեր, խաչքարեր ու ժայռաբեկորներ՝ իրենց վիմագիր արձանագրութիւններով:

Խոսրով եպս. Էմիրզեանի ողբականը

«Միոն»-ի այս թիւին ամէնէն հետաքրքրական յօդուածը Պոլսէն նորօժ **Տ. Նարեկ քհնյ. Տէյիքմէնձեանի** այն ուսումնասիրութիւնն է, որ սեռեւածի կ'ենթարկէ Խոսրով եպս. Էմիրզեանի կեանքն ու աւտոր առնչուած գայթակղալից եւ անհաստատի դէպքերը: Գրութիւնը ընթերցեցիք ուսիկանական վէպ մը կարդալու հետքով, յափշտակութեամբ...:



Խոսրով եպս. Էմիրզեան

Բայց ո՞վ է Էմիրզեան: Այսօրեան սերունդները չեն ճանչնար զայն, ո՛չ իսկ լսեր են իր անունը, սակայն իսթանպուլահայ երէց սերունդը քիչ-շատ գիտէ այս դժբախտ եպիսկոպոսին տարօրինակ պատմութիւնը...: Պատմենք՝ ամփոփ կերպով:

Անդրանիկ (աւագանի անունը) Էմիրզեան իր աչքերը լոյսին կը բանայ Պոլիս, 1932-ին: Հասակ կ'առնէ Գումգաբուի պատրիարքարանիստ մայր եկեղեցւոյ շրջանակին մէջ՝ իրեն դպիր: Շրջան մը կը յաճախէ Վիեննական Միսիոնարեան հայրերու Պոլսոյ լիսէն, յետոյ հաստատօրէն կ'որոշէ հոգեւորական դառնալ: Գարեգին պատրիարք Խաչատուրեան զինք սարկաւազ կը ձեռնադրէ 1951-ին, ինք ալ կը հետեւի պատրիարքարանի կտուրին տակ գործող հոգեւոր խորանի դասընթացներուն: Բայց արեղայ ձեռնադրուելու մտասեւեռումով Պոլսէն կ'անցնի Անթիլիաս, ուր Դպրեվանքի մէջ կ'ուսանի 1957-58 (Ջարեհ Ա. կաթողիկոսի գահակալութեան շրջանին): 1958-ի ամառը կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ ու վեղար կը ստանայ՝ ձեռամբ Արտակ եպս. Մանուկեանի (Թեհրանի երբեմնի առաջնորդը): Օձակից կ'ունենայ Սմբատ արք. Լափաճեանը (հետագային՝ արք.): Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կառոյցներուն մէջ կը ծաւալէ կրթական ու գրական գործունէութիւն (Դպրեվանք, «Հասկ» ամսագիր եւ այլն): Վարդապետական գաւազան կը ստանայ 1961-ին: Պոլիս կը վերադառնայ՝ Գարեգին պատրիարքի վախճանումէն ու Շնորհք պատրիարքի ընտրութենէն ետք, 1962-ին, ու կը դառնայ անբաժանելի մէկ մասնիկը իսթանպուլահայ եկեղեցական եռուն կեանքին, մնալով հանդերձ Անթիլիասի օրինաւոր միաբան: Մաս կը կազմէ Սկիւտարի Ս. Խաչ դպրեվանքի ուսուցչակազմին ալ: Կիլիկիոյ Խորէն Ա. կաթողիկոսին խնդրանքով՝ Շնորհք պատրիարք ծայրագնութեան աստիճան կը շնորհէ Խոսրով վարդապետին 1965-ին, Պոլսոյ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ: Տարի մը ետք, Պոլսոյ պատրիարքարանը յարմար կը դատէ եպիսկոպոսական իշխանութեան բարձրացնել Խոսրով ծ. վարդապետը՝ պայման դնելով սակայն, որ ան հրաժարի Անթիլիասի միաբանութենէն ու ընդգրկուի Մայր Աթոռի միաբանութեան մէջ՝ ընդ իշխանութեան Պոլսոյ արքեպիսկոպոսին: Էմիրզեան, իրեն ընկերակից ունենանալով Պոլիս ծառայող Շահան ծ. վրդ. Սվաճեանը, ցամաքի ճամբով (շոգեկառք) Սովետ. Հայաստան կը մեկնի 1966-ի աշնան եւ 13 Նոյեմբերին եպիսկոպոս կը ձեռնադրուի Ս. Էջմիածնայ տաճարին մէջ, ձեռամբ Վազգէն Ա. հայրապետի: Ասով՝ Էմիրզեան պաշտօնապէս անցում մը կատարած կ'ըլլայ Կիլիկիոյ միաբանութենէն դէպի Էջմիածնայ միաբանութիւն, զոչ արձանէրու երկու գահակալութիւն համամտութեամբ: Երկու նորօժ եպիսկոպոսները՝ Շահան եւ Խոսրով, դարձեալ շոգեկառքով Պոլիս կը վերադառնան, արժանանալով խանդավառ ընդունելութեան: Շուտով, Շնորհք պատրիարք ո՛չ միայն նորապսակ Խոսրով եպիսկոպոսը անդամ կը նշանակէ պատրիարքարանի Կրօնական Ժողովին, այլեւ զայն կը կարգէ **պատրիարքական փոխանորդ** (1967 Հոկտեմբեր): Մրբազանը կը հասնի իր կոչումի գագաթնակէտին...: Եւ հո՛ս, անպասելիօրէն, վրայ կը հասնի անոր թաւազուր անկումը Տարպեան Ժայռէն վար...:

Ի՞նչ կը պատահի:

1968 Փետրուարին յայտնի կը դառնայ, որ Խոսրով եպս. յանկարծ դրժեր է իր կուսակրօնութեան ուխտը, լքեր է իր հոգեւորականի տարազը ու իր անձը կապեր է իրեն տարեկից ամուսնացեալ հայ կնոջ մը հետ...: Պոլսահայ համայնքը կը ցնցուի, պատրիարքարանը կը մատուոյն եղ կացութեան: Թուրք մամուլն անգամ շարաթներով կը խօսի ու կը տեղեկագրէ այս աննախադէպ գայթակղութեան մասին: Այդ թերթերէն մին, Ա. Էջի վրայ, ուխտադրուծ հայ

ԲՈՒՈՐՍ ՎԱՐԴԱՆ ԵՆՔ՝ ԿՈՉՈՎ ՆՇՈՒԵՑԱԲ ԱԲԱՐԱՅՐԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՅՈՒՇԱՏՈՆԸ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

«ԱՐԻՈՒԹԵԱՆ ՈՒ ԲԱԶՈՒԹԵԱՆ ԱԷՉ ՎԱՆԿՈՏՈՒԹԻՒՄ ԶԻԱՌՆԵՆՔ»: (Հատուած՝ Վարդան Ըստէն)

451 քուականին մղուած Աւարայրի ճակատամարտի խորհուրդը այն էր, որ հայ ժողովուրդը պատրաստ էր զոհաբերել իր կեանքը՝ պահպանելու համար իր քրիստոնէական հաւատքն ու ազգային ինքնութիւնը: Թէեւ ռազմական առումով պարտութիւն էր, գաղափարական ու հոգեւոր առումով ան դարձալաղքանակ՝ ազատութեան եւ հաւատքի պայքարի խորհրդանիշ: Վարդաններն ու Ղեւոնդները, միաբանուած ու միախոհ, կանգնեցան օրուան թշնամիին դէմ եւ մղեցին իրենց անզիջում պայքարը: Անոնց համար հաւատքը «սովորական իմաստով» սահմանափակուած համոզում մը չէր, այլ կեանքի ամբողջական ուղեգիծ ու գոյապայքարի հիմք: Այդ հաւատքին մէջ միաձուլուած էին հոգեւորն ու բարոյականը՝ հայրենիքի ազատութեան ու անկախութեան գաղափարին հետ, ժողովուրդի մշակութային ու ազգային արժէքներու պահպանութիւնը, ինչպէս նաեւ ապագայի նկատմամբ ունեցած ձգտումներն ու երազները:

Ոստի վերոնշեալ միտքերէն բխելով, Չորեքշաբթի, 18 Փետրուար 2026-ին, վարժարանիս Յակոբ Պարսամեան սրահին մէջ կայացաւ Վարդանանց հերոսամարտի յիշատակը ոգեկոչող աշակերտական ձեռնարկը՝ ներկայութեամբ հիւր պատգամաբեր Արժանապատիւ Տէր Միքայէլ Քին. Տէմիրճեանի, հոգաբարձութեան փոխ-ստեղծատէս Տիար Պերճ Արապեանի, տնօրէնութեան, ուսուցչակազմի, ծնողներու եւ աշակերտութեան : Յայտագիրը



Վարդանանց քանադոնութիւնը:
Օրուան պատգամը դիրամատչելի ձեւով փոխանցեց Արժ. Տ. Միքայէլ Քին. Տէմիրճեան՝ ընդգծելով հաւատքի, յոյսի եւ սիրոյ գերազանցութիւնը ու

Վարդանանց անճնագրութիւնը:
Հուսկ, վարժարանիս Տնօրէնութիւն սրտառուչ խօսքով կոչ ուղղեց աշա-



կերտութեան՝ հաւատարիմ մնալու նահատակներու սրբազան կտակին: Ապա ան իր խորին երախտագիտութիւնը յայտնեց օրուան հոգեւոր հիւրին, յայտագրի պատրաստութեան մէջ մասնակցած ուսուցիչներուն, ինչպէս նաեւ հանդիսութեան մասնակցած բոլոր աշակերտներուն: Այնուհետեւ, հրաւիրելով վարժարանիս հոգաբարձութեան փոխստեղծատէս Տիար Պերճ Արապեանը, օրուան հիւրը պատուեցին յուշանուէրով մը:

Փա՛ռք եւ պա՛տիւ Վարդանանց հերոսներուն:
**Վահան Թէքէեան Վարժարանի
Լրատուական Գրասենեակ**



սկսաւ քայլերգներով, ապա բացման խօսք արտասանեց Միջն. Գ. դասարանի աշակերտուհի Մէլիս Ղազարեան: Նախակրթարանի եւ Միջնակարգի աշակերտները ներկայացուցին պարեր, խմբերգներ, խմբային արտասանութիւն եւ կենդանի պատկեր «Վարդանանց» խորագիրով, ուր հնչեց Բանաստեղծութեան Իշխան Վահան Թէքէեանի հանրայայտ «Խորհուրդ

ԵՐՈՒՍԱԳԵՄԻ «ՍԻՈՆ» ԱՄՍԱԳՐԻՆ ԼՈՐԱԳՈՅՆ ԹԻՒԸ

(Շարունակուած 8-րդ էջէն)

Եպիսկոպոսը կը ներկայացնէ որպէս «36-ամեայ Տոն-ժուան պատրիարքական փոխանորդը»...: Սայթաքաժ Եպիսկոպոսը տարիամուտելու եւ զայն վերստին իր հոգեւոր ասպարէզին ու կոչումին վերադարձնելու բոլոր ճիգերը կը մնան ասպարդին: Ոստի, Շնորհք պատրիարք ու Վազգէն Ա. կաթողիկոս կոչուած կարգալոյժ հռչակել զայն (Օգոստոս 1968): Միարկածը երկար չի տեսեր սակայն. հագիւ երկու ամիս: Գայթակղեցուցիչ դէպքին երկու հերոսները կը բաժնուին իրարմէ...: Բեկումնային այս փուլէն ամիսներ ետք՝ Էմիրզէեան կը դիմէ Վեհափառին՝ զոչում եւ ապաշխարանք արտայայտելով...: Սակայն Շնորհք պատրիարք կտրականապէս կը մերժէ գիրկ բանալ անոր հաւանական վերադարձին ու իր տեսակետը կը հաղորդէ Էջմիածին:

Բայց, քանի շաբաթները կը սահին՝ կարգալոյժ Անդրանիկ Էմիրզէեանի խռովքը կը սաստկանայ, ներսիդին կ'ալեկոծի, կրկին եկեղեցույ գիրկը դառնալու տենչը կը տառապեցնէ զինք: Մեղայագրով մը ան կը դիմէ Շնորհք պատրիարքին (1969): Իրերայաջորդ կերպով կը կնքէ երկու ամուսնութիւններ: Եւ որովհետեւ «կարգալոյժ հռչակուիլը արգելք չէր, որպէսզի ան շարունակէ իր ծառայութիւնը», Էմիրզէեան, շրջան մը յետոյ, կը սկսի լռիկ-մնջիկ ծառայել հեռաւոր ու աղքատիկ թաղի մը հայոց եկեղեցիին մէջ, **իբրեւ պարզ դպիր ու լուսարար**, իր այս համեստ ընթացքով յուզելով զինք ու իր փառատը անցեալը ճանչցող հաւատացեալները...:

Աղմկայարոյց գայթակղութենէն կ'անցնի 15 տարի: «Մարմարա»-ի եւ «Զուլիս»-ի մէջ յօրուածներ կը տպուին (1982-83) հոգեւոր վերին իշխանութեան առաջարկելով որ նախկին Խոսրով Եպիսկոպոսը կրկին ընդունուի եկեղեցա-

կանաց դասուն մէջ, ոչ անշուշտ որպէս Եպիսկոպոս, այլ՝ ամուսնացեալ քահանայ: Շնորհք պատրիարք ու Վազգէն կաթողիկոս, 1989-ին, բաւ համարելով անցնող քսան տարիները՝ որպէս ուխտադրուած սրբազանին ապաշխարութեան շրջան, ի վերջոյ ընթացք կու տան զայն իբրեւ քահանայ ընդունելու կոչելուն: Եւ ուրեմն, **Խոսրով քինյ. Էմիրզէեան** (ամուսնացեալ քահանայի կարգավիճակով) կը դառնայ իր հոգեւոր Տունը...: Բայց մահը չ'ուշանար: Քահանան կը վախճանի 1993-ին:

Տ. Նարեկ քինյ. Տէլիբեյեան այս ամբողջ պատմութիւնը արձանագրած է մանրամասնութեամբ, յատկապէս յենելով շրջանի հայ մամուլին հայթայթած տեղեկութեանց կամ լրատուութեանց վրայ:

«Միոն» առատօրէն լուրեր ալ կը հաղորդէ Երուսաղէմի կամ առհասարակ Պաղեստինի հայ գաղութին վերաբերեալ: Զօրօրինակ, կ'իմանանք, թէ տեղոյն Սրբոց Թարգմանչաց վարժարանը ներկայիս ունի եղեր 161 աշակերտ: Տեսուչն է Սերովբէ արք. Անտոնեան, փոխտեսուչը՝ արք. Միքայէլ Տէր Մաթոսեան: Իսկ վանքին ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի (ուսանողութեան մեծ մասը Հայաստանէն) տեսուչն է Գեորգ վրդ. Հայրապետեան: Բացի Նուրհան պատրիարքէն՝ վանքին մէջ կը ծառայեն երեք բարձրաստիճան եկեղեցականներ. Սեւան արք. Ղարիպեան (Ս. Աթոռին լուսարարապետը), Կորիւն եպս. Բաղդասարեան (կալուածոց տեսուչ) եւ Թեոդորոս եպս. Զաքարեան (ատենապետ Տնօրէն Ժողովոյ): Կան մեծաթիւ վարդապետներ, որոնք «զինուրեալ» միաբաններն են այս պատմական նուիրապետական հաստատութեան:

Հակէպ

ՍԻՆԿԱՔՈՐԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ԴԺՈՒԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

(Ծարունակուած նախորդ թիւէն)

ԺԻՐԱՅՐ ԾՈՒՇԱՆՆԱՆ

Ան կոչ ըրաւ գործատուներուն կատարել իրենց մասը, որպէսզի աշխատողները ներդնեն իրենց առաւելագոյն ջանքերը՝ առաւելագոյն պարգեւատրումներ ստանալու համար, ուղղակի պարգեւատրումներ իրենց աշխատավարձերու եւ նպաստներու միջոցաւ, եւ անուղղակի եկամուտներ կառավարութեան եկամուտներու միջոցաւ՝ տուներու, առողջապահութեան, կրթութեան եւ սոցիալական նպաստներու միջոցաւ:

Օրինակ, ան խրախուսեց արհեստատրական միութիւններու առաջնորդներուն համագործակցիլ գործերու առաջնորդներուն հետ՝ ստեղծելու որակի վերահսկման շրջանակներ՝ աշխատողներու խմբեր, որոնք միասին առաջարկութիւններ կը կատարեն աշխատանքը բարելաւելու, ժամանակ եւ ծախսեր խնայելու:

Գլուխ 7 - Արդար, թէ բարեկեցիկ հասարակութիւն.

Սկիզբը ԼԿՅ-ն կը հաւատար ընկերվարութեան գաղափարին, բոլորին համար արդար բաշխման գործընթացին:

Յետոյ կառավարութիւնը հասկցաւ, որ անձնական քաջալերանքը եւ անձնական պարգեւատրումները կարեւոր են արտադրողական տնտեսութեան համար:

Քանի որ մարդիկ անհաւասար են իրենց կարողութիւններով, եթէ շուկան կ'որոշէ աշխատանքի արդիւնաւետութիւնը եւ պարգեւատրումները, կ'ունենանք քանի մը խոշոր յաղթողներ, միջին յաղթողներ եւ մեծ թիւով պարտուողներ, որ կը յանգեն ընկերային լարուածութեան, քանի որ հասարակութեան արդարութեան զգացումը վիրատուած է:

Մրցակցային յաղթողը կը վերցնէ ամբողջ հասարակութիւնը, ինչպէս է Հոնկ Բոնկը, որ ընդունելի չէր Սինկաբորին:

Ազատ շուկայի մրցակցութեան ծայրայեղ արդիւնքները հաւասարեցնելու համար իրենք ստիպուած էին վերաբաշխել ազգային եկամուտը՝ օժանդակութիւններու միջոցաւ այն բաներու համար, որոնք կը բարելաւեն քաղաքացիներու եկամտաբերութիւնը, ինչպէս կրթութիւնը, բնակարանային եւ հանրային առողջապահութիւնը նոյնպէս ցանկալի էին: Սակայն անձնական բժշկական օգնութեան, կենսաթոշակներու կամ կենսաթոշակային նպաստներու ճիշդ լուծումը գտնելը մեծ աշխատանք կը պահանջէր:

Ուստի իրենք որոշեցին ընդլայնել պարտադիր խնայողական ծրագիրը՝ դարձնելով հիմնադրամի, որ թոյլ կու տայ իւրաքանչիւր աշխատողի ունենալ տուն:

Արեւմտեան երկրները, ունին որոշ նշանակալի հին խնդիրներ, ինչպէս Իտալիան եւ Սպանիան (նաեւ Ճափոնը), չեն փոխարինել իրենց բնակչութեան թուաքանակը բաւականաչափ որ արագ կ'աճի, ուստի բնակչութեան թուաքանակի նուազում կը սպասուի յաջորդ 30-50 տարիներու ընթացքին:

Առողջապահութեան եւ կենսաթոշակի անհատական ծրագրերու որդեգրումը յառաջ շարժելու ճանապարհի կ'ըլլայ, այս խնդիրը չշարունակուելու համար:

1968 թուականին իրենք փոխեցին CPF-ը եւ մեկնարկեցին վերանայում տան սեփականութեան նոր ծրագիրը:

Աշխատողներուն թոյլատրուեցաւ օգտագործել իրենց կուտակուած CPF խնայողութիւնները՝ տան կանխավճարը վճարելու եւ սակերը սպասարկելու համար:

ԼԿՅ-ն այս ծրագիրը քննարկած էր Արհեստատրական միութիւններու ղեկավարներուն հետ, քանի որ անհրաժեշտ էր Արհեստատրական միութիւններուն տուած խոստումը կատարելու համար, որ իւրաքանչիւր աշխատողի կը տրուի տուն ունենալու հնարաւորութիւն:

ԼԿՅ-ն վճռականօրէն տրամադրուած էր խուսափիլ ներկայ սերունդի ընկերային ծախսերու բեռը յաջորդ սերունդին վրայ դնելու:

Անվճար բժշկական ծառայութիւններու գաղափարը կը հակադրէր մարդկային վարքագծի իրականութեանը:

ԼԿՅ-ի կարծիքով՝ ընդհանրացուած առողջութեան ապահովագրութիւնը բաց էր չարաշահման համար, ուստի անհատին պատասխանատու դարձնելը կը նուազեցնէր այս վտանգը:

Իւրաքանչիւր աշխատող ունէր իր սեփական կենսաթոշակային սակը:

CPF-ը աշխատողներուն ապահոված է համապարփակ ինքնավճար ապահովագրութեան հիմնադրամով առանց բեռը տեղափոխելու աշխատողներու յաջորդ սերունդին վրայ:

Աւելի արդարացի եւ ողջամիտ է, որ իւրաքանչիւր սերունդ վճարէ ինքզինքին համար, եւ իւրաքանչիւր մարդ խնայէ իր կենսաթոշակին համար:

Օգնութիւնը հասանելի է որպէս վերջին միջոց, որ հակառակ է աւելի ազատամիտ մօտեցման, որ գործնականօրէն կը խրախուսէ մարդոց պահանջել իրենց իրաւունքները՝ առանց ամօթի զգացման:

Գլուխ 10. Տաղանդները խրախուսել եւ ներգրաւել.

ԼԿՅ-ն իր 1983 թուականին հրապարակային ըսած է. «Մեր շրջանաւարտներուն համար յիմարութիւն էր ընտրել նուազ կրթուած եւ նուազ խելացի կանանց, եթէ իրենք կը ցանկային, որ իրենց երեխաները նոյնքան լաւ տրվին, որքան իրենք»: Մամուլը այն անուամբ է «Մեծ ամուսնական բանավեճ»:

Այս տարօրինակ մեկնաբանութիւնը բացատրելու համար ԼԿԻ-ի համոզումն տեսակէտն այն էր, որ տաղանդը երկրի ամենաբանկարժէք գործօնն է: Եւ Սինկաբորի նման փոքր, հատկապէս աղքատ երկրի մը համար, որուն բնակչութիւնը 1965 թուականին անկայութեան տարիներուն ընդամենը 2 միլիոն էր, որ ինքնին որոշիչ գործօն է:

Մեր լաւագոյնները (ամենախելացի/ամենաբարձր IQ-ով) չէին վերարտադրուիր, քանի որ իրենց կրթական հասարակութիւն ունեցող տղամարդիկ չէին ուզէր ամուսնանալ իրենց հետ:

Բացի այդ, համալսարանական կրթութիւն ստացած կանանց երեխաներու թիւը <2 էր, իսկ չկրթուած կանանց համար՝ >4:

ԼԿՅ-ն չէր ուզէր թոյլ տալ, որ այս անհաւասար ամուսնութեան եւ ծննդաբերութեան օրինաչափութիւնը մնար անճշտ եւ անվերահսկելի, ուստի որոշեց ցնցել երիտասարդ տղամարդոց՝ հեռացնելով իրենց վնասակար նախապաշարումները:

Առանց օտարերկրեայ տաղանդներու, Սինկաբոր այդքան լաւ պիտի չգործեր:

Արտասահմանէն եկած հազարաւոր ճարտարագէտներ, տնօրէններ եւ այլ մասնագէտներ օգնեցին իրենց աճիլ:

«Եթէ մենք չամբողջացնենք մեր ծրագիրը օտարերկրեայ տաղանդներով, մենք չենք հասնիր բարձրագոյն դիրքի:

Գլուխ 11 - Ծառ լեզուներ թէ մէկ լեզու.

Սինկաբոր երբեք չէ ունեցած մէկ ընդհանուր լեզու: Իրենք հասկցան, որ անգլերէնը պէտք է ըլլայ աշխատանքի լեզուն, նաեւ ընդհանուր լեզուն:

Իրենք չէին յաջողիր որպէս միջազգային առետրային համայնք, եթէ օգտագործէին մալայերէն, չինարէն կամ քամիլերէն:

Այնուամենայնիւ, անգլերէնի՝ որպէս մէկ ընդհանուր լեզուի նկատմամբ դիմադրութիւնը անդադար էր:

Առանց անոր Սինկաբոր չէր ունենար աշխարհի բազմաթիւ բազմազգ ընկերութիւններ եւ առաջատար դրամատուներ Սինկաբորի մէջ:

Իրենց ժողովուրդը նոյնպէս հեշտութեամբ չէր օգտուեր համակարգիչներու աշխարհէն:

Գլուխ 12 - Կառավարութիւնը մաքուր պահպանել.

ԼԿՅ-ի խմբակը զգուած էր Ասիայի կարգ մը առաջնորդներու ապականուածութենէն, ազահութիւնէն, եւ անկումէն:

Իրենց ճնշուած ժողովրդի ազատութեան համար պայքարողները դարձած էին իրենց հարստութեան թալանչիներ:

«Նշանակուած իշխանութիւնը ներդրուած այն տղամարդոց մէջ, որոնք չեն կրնար ապրիլ իրենց աշխատավարձով, այդ իշխանութիւնը չարաշահելու հրաւեր է»:

Երբ նախարարները կը վայելէն ժողովուրդի յարգանքն ու վստահութիւնը, պետական ծառայողները նոյնպէս կրնան բարձր պահել իրենց գլուխները եւ պտահութեամբ որոշումներ կայացնել:

Ասիկա կարեւոր տարբերութիւն ստեղծեց, մանաւանդ Կոռուպցիայի դէմ պայքարի հիմնական մարմինը Կոռուպցիոն գործողութիւններու հետաքննութեան գրասենեակը (ԿՀՀԲ) ստեղծելով:

Ամենաարդիւնաւետ փոփոխութիւնը (1960 թուականին) դատարաններուն թոյլատրելի էր ապացոյց համարել, որ մեղադրեալը կ'ապրի իր միջոցներէն վեր կամ ունի սեփականութիւն, որ իր եկամուտը չէր կրնար բացատրել որպէս հաստատող ապացոյց, որ մեղադրեալը կաշառք կ'ընդունի կամ կը ստանայ:

Իւրաքանչիւր պաշտօնեայի եւ իւրաքանչիւր նախարարի հետաքննելու լիազօրութեամբ, CPIB-ի տնօրէնը, աշխատելով վարչապետի գրասենեակին հետ, ձեռք բերաւ հիանալի համբաւ:

Գլուխ 14 - Լրատուամիջոցները կառավարելու նախագիծ.

ԼԿՅ-ի վաղ փորձը Սինկաբորի երբ ձեւատրեց իր տեսակետները մամուլի՝ ճշմարտութեան եւ խօսքի ազատութեան պաշտպան ըլլալու պնդման վերաբերմամբ:

Մամուլի ազատութիւնը իր սեփականատէրերու ազատութիւնն էր՝ առաջ մղելու իրենց անձնական եւ դասակարգային շահերը:

Կարեւոր է, որ Սինկաբորցիները իմանան իրենց կառավարութեան պաշտօնական դիրքորոշումը կարեւոր հարցերու վերաբերմամբ:

Գլուխ 15 - Նուազախումբի հոգեբանութիւնը.

ԼԿՅ-ն եւ իր նախարարները մնացին ընկերներ եւ գործընկերներ 3-4 տասնամեակ:

Իրենց նուիրուածութիւնը ընդհանուր գործին միակ նպատակն էր: Կառավարութեան կառավարումը նման չէ նուազախումբի ղեկավարմանը:

Ոչ մէկ վարչապետ կրնայ իրագործել իր նպատակները առանց իր խումբին:

Գլուխ 30 - Ամերիկայի պէ՞տք է հետեւիլ

Ասիական օրակարգը ընդդէմ արեւմտեան բանավեճը. ԼԿՅ-ն կը վերաբերի կոնֆուցիական (ոչ թէ ասիական) արժեքներուն համեմատ, որոնք կը գերակշռեն Չինաստանի, Քորէայի, Ճափոնի եւ Վիետնամի մշակոյթներուն:

Ասիական օրինակը առանձնապէս գոյութիւն չունի, բայց կան հիմնական տարբերութիւններ Արեւելեան Ասիայի կոնֆուցիական եւ արեւմտեան ազատական արժեքներու միջեւ:

Կոնֆուցիական հասարակութիւնները կը կարծեն, որ անհատը գոյութիւն ունի ընտանիքի, ընդլայնուած ընտանիքի, ընկերներու եւ աւելի լայն հասարակութեան հետ, եւ որ կառավարութիւնը չի կրնար եւ պէտք չէ ստանձնէ ընտանիքի դերը: Արեւմուտքի մէջ շատեր կը կարծեն, որ կառավարութիւնը կրնայ կատարել ընտանիքի պարտականութիւնները: Սակայն երբ ան ձախողի, ողբերգութիւնը ի յայտ կու գայ ինչպէս միայնակ մայրերու պարագային:

Սինկաբոր կախում է ընտանիքի ազդեցութիւնէն՝ հասարակութիւնը կարգ ու կանոն պահպանելու եւ խնայողութեան, աշխատասիրութեան, որդիական բարեպաշտութեան, աւագներու նկատմամբ յարգանքի, գիտութեան եւ ուսման մշակոյթը պահպանելու համար:

Արեւելեան հասարակութիւններու գլխաւոր նպատակը կարգուկանոն ունեցող հասարակութիւն ունենալն է, որպէսզի բոլորը կարենան վայելել ազատութիւնը:

Ամերիկան պէտք չէ անխտիր կերպով իր համակարգը պարտադրէ այլ հասարակութիւններուն վրայ աշխատի, երբ նշմարէ թէ անոնց չի կրնար յարմարի:

6.1.2026
Պրիւսէլ-Պէլկիս

(Ծարունակելի)

ՄՐՏԻ ԽՕՍԿ՝ ԱՆՏՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՄԱՆՈՒԱՆ ՏԽՈՒՐ ԱՌԻԹՈՎ...

Տեղին պիտի ըլլար նշել, թէ բաւական ժամանակ անցած է այն օրէն, երբ վերջին անգամ Հայր Սարոյեանին հանդիպեցայ: Կեանքը մեզ զանազան ուղիներով կ'առաջնորդէ, եւ տարիներու ընթացքին մեր ճանապարհը այլեւս այնքան յաճախ իրարու չեն խաչաձեւեր: Թէեւ պաշտօնի բերմամբ Հայր Սուրբը որոշ ժամանակ մը հեռու կը գտնուէր մեր եկեղեցիէն, սակայն անոր հետ բաժնած մեր յիշատակները վատ կը մնան ու երբեք չխամբին:

Երբ լսեցի անոր մահուան գոյժը, անոր յուշերը վերակենդանացան ներաշխարհիս մէջ, ոչ միայն տխրութեամբ, այլ նաեւ քաղցր ու գեղեցիկ յիշատակներ վերյիշելով: Կարծես տարիները անհետացան եւ ես կրկին ապրեցայ այն սրտի հարազատ պահերը, երբ Հայր Սարոյեանը մեր Եկեղեցւոյ մէջ տակաւին մեզ կ'առաջնորդէր, կը դաստիարակէր, մեզի հետ կ'աղօթէր ու մեր ուրախ պահերը կը բաժնէր:

Հակառակ որ վերջին տարիներուն բաւականաչափ զինք չէինք տեսներ, սակայն անհկա երբեք մեր սրտերէն հիւլէ մ'իսկ չհեռացաւ: Մենք երբեք պիտի չմոռնանք մեր սիրելի ժողովրդապետը:

Հայր Սարոյեանը իրապէս բացառիկ կղերական մըն էր: Անոր արժանիքը իր վայելած ժողովրդականութեան մէջ չէր, այլ իր խոնարհութեան, եկեղեցիին եւ Աստուծոյ ու Իր հօտին հանդէպ անոր ամբողջական նուիրումութեան մէջ: Ան Աստուծոյ խոնարհ ծառայ էր, որ իր անձէն շատ բան կը նուիրէր իր ծուխին՝ առանց փոխաբերելու գովասանք ու շնորհակալութիւն ակնկալելու: Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր շատեր ուշադրութիւն ու գովասանք կը փնտռեն, Սակայն Հայր Անտոնը միայն ծառայել կ'ուզէր: Եւ այդ լուռ անասկարկ ծառայութեան մէջ, ան մնայուն արժէքով նշանակալից բան մը կառուցեց:

Ան իր համայնքին վստահութիւնը լիովին շահելով զուտ հոգեւոր տուն մը կառուցեց: Հայր Սարոյեանը կը հասկնար, որ եկեղեցին պարզապէս պատեր, ծէսեր կամ արարողութիւններ չէր:

Եկեղեցին ժողովուրդն է, իր հաւատացեալներով: Հայր Սարոյեանը խոր ներդրում ունեցաւ մարդոց հոգիներու մէջ, հաւատքի ամրապնդման ճանապարհով: Ան բարի էր բոլորին հետ՝ մանուկներուն, երիտասարդներուն, մեծահասակներուն, տարեցներուն եւ առանց բացառութեան բոլորին հետ: Իւրաքանչիւր անձի կը մտնէր արժանապատուութեամբ եւ արդարութեամբ: Երբ քեզի հետ կը խօսէր, կը զգայիր թէ իր ուշադրութեան կեդրոնն էիր: Ու երբ քեզի մտիկ կ'ընէր, կը զգայիր թէ խօսքդ տեղ հասած է: Երբ քեզի հետ կ'աղօթէր, արդէն բաւարարուած կը զգայիր:

Ան ստեղծեց միջավայր մը, ուր մարդիկ ապահով կը զգային՝ հաւատքով լեցուն դարձեալ վերադառնալու: Իր առաջնորդութեան տակ եկեղեցին միայն աղօթքի վայր մը չէր ուր կ'երթայինք, այլ հարազատ, ընտանիքի վայր մը, ուր բոլորս առանց բացառութեան կը պատկանէինք:

Իր ծառայութեան ամենագեղեցիկ կողմերէն մէկը իր սէրն էր մանուկներուն հանդէպ, որոնց միայն եկեղեցւոյ ապագան չէր նկատեր, այլ այսօրուան կենդանի եկեղեցիի կենսական մասը: Ան կը հրաւիրէր մանուկները Աստուծոյ մօտենալու՝ քաջալերելով զանոնք մասնակցելու, ծառայելու եւ սորվելու երկխոսութիւն, պարտաճանաչութիւն եւ խոր հաւատք:

Իր առաջնորդութեամբ խորանը բաց էր թէ՛ տղոց եւ թէ՛ աղջիկներուն համար: Մեր եկեղեցւոյ մէջ դպիր տղաք եւ աղջիկներ միասին կը ծառայէին՝ սորվելով կարգապահութիւն, յարգանք եւ նուիրումութիւն: Ասկա պարզապէս ներկայութիւն չէր, այլ հոգեւոր տեսակական: Ամէն մանուկ, որ խորանին կ'ուզէր ծառայել, Աստուծոյ տան մէջ ընդունուած եւ արժեւորուած կը զգար ինքզինք:

Կրնամ վկայել, թէ մեր ընտանիքը ապրեցաւ այս օրինութիւնը: Բառերը բաւարար չեն արտայայտելու, թէ ինչ մեծ նշանակութիւն ունէր մեզի համար, երբ իմ զաւակներս դպրոհներ (alter girls) եղան Հայր Սարոյեանի առաջնորդութեան տակ: Ան միայն չարտօնեց, որ անոնք եկեղեցւոյ խորանի մօտ կանգնէին, այլ ուղղորդեց զանոնք, անհրաժեշտութեան պարագային սրբագրեց, քաջալերեց, օրհնեց եւ զգացնել տուաւ, թէ իրենք մեծ դեր ունին եկեղեցւոյ գոյութեան մէջ: Այդ յիշատակները սուրբ են մեզի համար: Անոնք զանձեր են, որոնք պիտի կրենք մեր ամբողջ կեանքի ընթացքին:

Հայր Սարոյեանը արդար ու կարգապահ էր երիտասարդին, տարեցին եւ բոլորին հանդէպ: Իր կարգապահութիւնը խիստ չէր, այլ նպատակաւոր՝ արմատաւորուած սիրոյ եւ եկեղեցւոյ սրբութեան հանդէպ յարգանքին մէջ: Ան կը հաւատար, թէ երկխոսութիւնը կարեւոր է, կարգը կարեւոր է, եւ Աստուծոյ տան հանդէպ յարգանքը անփոխարինելի:


- Քանի որ ուղղամիտ ու արդար էր՝ մարդոց վստահութիւնը կը վայելէր:
- Քանի որ հետեւողական էր՝ մարդիկ կը յարգէին զինք:
- Քանի որ խառնուածքով հաստատամիտ էր՝ մարդոց սէրը կը վայելէր:

Սուրբ Պատարագէն դուրս, ան մեր ծխական կեանքը կենդանի կը պահէր: Ամէն Կիրակի, Պատարագէն ետք, կը հաւաքուէինք եկեղեցւոյ սրահին մէջ սուրճի սեղաններու շուրջ, եւ Հայր Սարոյեանը կը միանար մեզի: Ան կը գրուէր բոլորին հետ: Ան մեզի հետ կը տօնէր մեր ուրախութիւնները՝ ծննդեան օրեր, տարեդարձներ եւ ընտանեկան այլ ուրախ առիթներ: Ան նաեւ մեզի կը միանար մեր դժուարին սուգի պահերուն՝ մխիթարելով մեզ մեր հարազատներուն յիշատակը պահելու սուգի օրերուն: Օգնելով կարիքաւորներուն, ուղղութիւն տալով կամ պարզապէս համբերութեամբ եւ կարեկցութեամբ լսելով անոնց ցաւի ճիչերը: Լաւ ու վատ օրերուն, ուրախութեան եւ վշտի պահերուն, ան հաւատացեալները կը համախմբէր՝ ոչ թէ իր շուրջ, այլ Քրիստոսի շուրջ:

Ան կ'աշխուժացնէր մեր եկեղեցւոյ հոգեւոր մթնոլորտը: Պաշտամունքը հարգատ էր թուր ըլլալ ու Աղօթքը ջերմեռանդ: Եկեղեցւոյ մէջ տիրող եղբայրասիրութիւնը իսկական էր: Ան օգնեց կառուցելու եկեղեցական հարազատ միջավայր մը, հիմնուած հաւատքի, կարեկցութեան, կարգապահութեան, միութեան եւ յոյսի վրայ: Երբ 26 Հոկտեմբեր 1985-ին քահանայ ձեռնադրուեցաւ, Հայր Անտոն ընտրեց իր կարգախօսը. «Մենք Տիրոջ այգիին մէջ մշակներ ենք»: Տիրոջ այգիին մէջ մշակելն իրեն համար միայն արտայայտութիւն մը չէր, այլ իր կեանքը առաջնորդող թեման: Սորվեցնելով ու խնամելով, բժշկելով ու կառուցելով, աղօթելով ու համբերելով՝ ան մարմնաւորեց այս բոլոր աշխատանքները խոնարհութեամբ եւ նուիրումով: Գերմանիոյ մէջ իր դասախօսը՝ Գարտիմալ Ժոզէֆ Ռացիկներ, որ հետագային դարձաւ Բենեդիկտոս Ժ-Ջ Պապ, իր պապական առաջին քարոզին մէջ ինքզինք կոչեց «Տիրոջ այգիին պարզ ու խոնարհ մշակ»: Այս խօսքերը կ'արտացոլացնէին այն հաւատքը, զոր Հայր Անտոն ամբողջ կեանքին ընթացքին կրեց իր մէջ: Ան խորապէս ներշնչուած էր Սուրբ Պողոս Առաքեալէն, որ Դամասկոսի ճամբուն վրայ դարձի եկա՛ւ՝ Հայր Անտոնի ծննդավայրին մէջ: Ան կը հիանար Սուրբ Պողոսի քաջութեամբ՝

ճշմարտութիւնը առանց վախի հռչակելու կարողութեան վրայ, եւ ինք ալ այդ ուղին ընտրեց: Երբ հարցնէին իրեն, թէ արդեօ՞ք կը մտահոգուի իր ապագայով կամ դիմագրաւած դժուարութիւններուն ի տես, ան պարզապէս կը ժպտար եւ կ'ըսէր՝ ոչ: Ան համեստ ու հաւատացեալ մարդ էր: Հեռու էր փառասիրութենէն, իշխանութեան կամ պաշտօնի բարձրացման փափաքէն: Ազատ՝ համարձակ խօսելու, վճռական գործելու եւ իրեն վստահուածներուն անսահման սիրով հոգ տանելու:

Թէեւ որոշ ժամանակէ մը ի վեր հեռու էր մեր եկեղեցիէն, հիմքը, գոր ան դրած էր, գոյատեւեց: Իր ներշնչած արժէքները մնացին: Յիշատակները մնացին: Գուցէ Հայր Անտոնը միշտ չստացաւ այն գնահատանքը, որուն՝ արժանի էր՝ կեանք մը ամբողջ՝ կրած բեռներուն եւ մեզի համար մատուցած աղօթքներուն համար: Բայց երկինքը տեսաւ: Աստուած տեսաւ: Եւ այսօր մենք կը գիտակցինք, թէ անհկա ինչքա՛ն խոր ազդեցութիւն ունեցաւ մեր կեանքերուն վրայ:



Սեպտեմբեր 11, 1947 - Փետրուար 11, 2026

- Մենք ամբողջ էութեամբ պիտի կարօտանանք զինք:
- Պիտի կարօտանանք հոգեւայաց իր ձայնը ու Աւետարանի ընթերցումը:
- Պիտի կարօտանանք իր հարազատ ջերմ ներկայութիւնը:
- Պիտի կարօտանանք իր հոգեւոր առաջնորդութիւնը:
- Պիտի կարօտանանք իր աղօթքները:
- Պիտի կարօտանանք իր մեղմ ժպիտը:

Եւ թէեւ վերջին տարիներուն ժամանակն ու հեռաւորութիւնը մեզ իրարմէ բաժնեցին, սակայն երբ լսեցինք իր մահուան գոյժը, անցած տարիները իրենց ողջ քաղցրութեամբ վերադարձան՝ ոչ դառնութիւն, ոչ զղջում, այլ միայն երախտագիտութեան զգացումներով ու անմոռանալի յիշատակներով առլցուն:

Մենք երբեք պիտի չմոռնանք զինք: Այսօր, երախտապարտ սրտերով, Հայր Սարոյեանը կը յանձնենք Տիրոջ ողորմութեան, որուն որպէս հաւատարիմ ծառայ, սիրեց ու ամբողջ կեանք մը ծառայեց...:

Թող Տերը իրեն շնորհէ յաիտեանական հանգստութիւն եւ վարձատրէ իր հաւատարիմ ծառան՝ հայր Անտոն Սարոյեանը՝ աղօթքով, նուիրումով ու զոհողութեամբ յատկանշուող կեանքը: Առաւել եւս, թող Լիբանանի Չմմաթի մայրավանքը՝ գոր որդիական նուիրումով կը սիրէր, գգուանքով ընդունի զինք եւ առաջնորդէ ղեպի իր Որդին, որ զինք կը դիմաւորէ Իր երկնաւոր արքայութեան մէջ:

Թող Հայր Անտոն Վարդապետ Սարոյեանի յիշատակը յաիտեան մնայ մեր սրտերուն մէջ:

Փիթըր Պ. Հայկ
lph@att.net

Under the auspices of His Eminence Archbishop Hovhannes Derderian, Primate
Organized by "ZVARTNOTS" CULTURAL COMMITTEE & TEKEYAN CULTURAL ASSOCIATION - LA CHAPTER
Invite you to A Commemoration of the 44-Day War and the Desecration of Artsakh
Featuring A screening of Endless Exile A documentary on the 44-Day War
By MANO BAGHJAJIAN
Thursday, April 9, 2026 at 7 p.m. At "ARMEN HAMPAR" Room 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504
Reception Free Admission

Պատմական Ապստոլ

Երկու եւ Կէս Դար

ԳԵՈՐԳ ԶԵՇԵՆԻՐՄԱՆ

Ընթացիկ տարւան 4 Յուլիոս կը զուգարկայի Ամերիկայի Միացեալ Նահանգներու անկախութեան 250 ամեակին: Ամերիկայի Միացեալ Նահանգները՝ բաղադրուած արեւմտեան 13 նահանգներէն, մասնաւորապէս 1776-ին իր անկախութեան օրը նշելու համար 1776-ի եւ 2026-ի միջեւ է:

1776

Երբ անկախութիւնը հռչակուեցաւ, Միացեալ Նահանգները կը բաղկանային 13 նահանգներէ, իսկ երկրին բնակչութիւնը կը հաշուէր միայն 2.5 միլիոն: Երկրին առաջին Նախագահն էր Գորտ Ուաշինկթընը, որ իշխեց ութ տարի (1789-1797):

Հինա արդարօրէն հարց պիտի տար թէ ո՞ր դեկտեմբերի Միացեալ Նահանգները, իր անկախութեան հռչակումէն (1776) մինչեւ 1789-ը՝ երբ Գորտ Ուաշինկթընն եղաւ իր առաջին Նախագահը: Արդարեւ այդ շրջանը դեկտեմբերեան Մայր ցամաքային Համագումարին կոչով (Continental Congress), ընդհանուր հրամանատարութեամբ Զօրավար Գորտ Ուաշինկթընի:

Ուրեմն առաջին 13 նահանգներն են: New Hampshire, Massachusetts, Rhode Island, Connecticut, New York, New Jersey, Pennsylvania, Delaware, Maryland, Virginia, North Carolina, South Carolina and Georgia.

2026

Այժմ Միացեալ Նահանգները կը բաղկանան 50 նահանգներէ, իսկ անոր բնակչութիւնը կը հաշուէ 343 միլիոն: Այսօր 47-րդ Նախագահն է Տանըլտ Թրամփ, որ երկրորդ անգամ ըլլալով ընտրուած է այդ պաշտօնին: Հինա մայիսի 1-ին ի՞նչ կարեւոր իրադարձութիւններ տեղի ունեցած են՝ 1776-էն մինչեւ 2026-ը:

1. Ամերիկայի Միացեալ Նահանգներու սահմանադրութիւնը ստորագրուած է 1787-ին, վաւերացուած 1788-ին եւ գործածութեան դրուած 1789-ին: Սահմանադրութիւնը ստորագրուած է 39 պատգամաւորներու կողմէ, իսկ վաւերացումը՝ վերոյիշեալ 13 նահանգներուն կողմէ: Հոս տեղին է յիշել որ սահմանադրութիւնը ցարդ ենթարկուած է 27 բարեփոխումներու (amendments):

2. Ամերիկայի քաղաքացիական պատերազմը (Civil War) տեւեց չորս տարի (Ապրիլ, 1861-էն Ապրիլ 1865): Սա Մեամորթ գերիներու ազատագրման առնչութեամբ պայքար մըն էր Հիւսիսային եւ Հարաւային նահանգներուն միջեւ, որ վերջացաւ Հիւսիսային նահանգներուն յաղթանակով: Երկուստեք տրուած գոհեքուն քիւր կը հասնէր 650,000-750,000:

3. 1 Յունուար, 1863-ին, Միացեալ Նահանգներու 16-րդ Նախագահը՝ Աբրահամ Լինքոլնը, ստորագրած է «Ազատագրման Հռչակագիր»-ը (Emancipation Proclamation), ըստ որուն՝ գերիներուն ազատութիւն կը շնորհուի:

4. 1920-ին, սահմանադրութեան 19-րդ բարեփոխումով՝ կիները իրաւունք ստացան քուէարկութեան մասնակցելու:

5. 1933-ին, սահմանադրութեան 20-րդ բարեփոխումով՝ նորընտիր Նախագահին երդմանակարգութեան պաշտօնական արարողութիւնը սկսաւ տեղի ունենալ 4 Մարտի փոխարէն՝ 20 Յունուարին:

6. 1940-ին, ընկերային ապահովութեան որոշումը օրէնքի անցաւ՝ Նախագահ Ֆրանքլին Ռուզուելթի նախաձեռնութեամբ: Գիտէ՞ք թէ ըստ այս օրէնքին, քաղաքացիները երբ հանգստեան կոչուին թէ անակազմ որոշ գումար մը կը ստանան եւ թէ ալ պետութիւնը կ'ապահովէ իրենց առողջապահական խնամքը:

7. 1951-ին, սահմանադրութեան 22-րդ բարեփոխումով՝ Նախագահի մը պաշտօնավարութիւնը սահմանուեցաւ երկու շրջանով միայն: Այսինքն՝ Նախագահ մը կրնայ երկու անգամ չորսական տարի պաշտօնավարել միայն:

Այս որոշումը արդիւնք էր Նախագահ Ֆրանքլին Ռուզուելթի չորս անգամ ընտրուելուն (1932, 1936, 1940 եւ 1944), որովհետեւ ան շատ սիրուած էր ժողովուրդին կողմէ: Դժբախտաբար սակայն, ան վախճանեցաւ 1945-ին՝ իր չորրորդ շրջանը հազիւ սկսած . . .

8. 1965-ին, Նախագահ Լինտոն Դանսըն ստորագրեց հրամանագիր մը, թուր շնորհիւ սեւամորթ ամերիկացիները իրաւունք ստացան քուէարկութեան մասնակցելու:

Այս շատ հաւանաբար արդիւնքն էր Դոկտ. Մարթին Լուտըր Քինկի սեւամորթ ամերիկացիներու իրաւունքները պաշտպանող Խաղաղ ցոյցերուն եւ յատկապէս իր դէպի Մայրաքաղաք Ուաշինկթըն երթին՝ 1963- ին, երբ ան արտասանեց իր հռչակատու ճարը՝ «I Have a Dream» խորագրով:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու 250 տարւան պատմութեան մէջ՝ դժբախտաբար երկու դէպքեր պատահեցան, որոնք խորապէս ցնցեցին ամերիկացի ժողովուրդը:

Առաջին

Նախագահ Աբրահամ Լինքոլնի սպանութիւնը՝ 14 Ապրիլ, 1865-ին, երբ ան մայրաքաղաք Ուաշինկթընի Ֆորտ թատերասրահը կը գտնուէր:

Երկրորդ

Նախագահ Դան Քէնէտի սպանութիւնը՝ 22 Նոյեմբեր, 1963-ին, երբ ան պաշտօնական այցով Թէքսասի Տալլա քաղաքը գացած էր: Հինա մայիսի 1-ին Ամերիկայի Միացեալ Նահանգները ի՞նչ պատերազմներ մղած է, արտաքին ճակատի վրայ:

1. Երկրորդ Համաշխարհային Պատերազմը (1941-1945) : Գերմանիոյ միացած էին Իտալիան եւ Ճապոնը: Ամերիկան սկիզբը հեռու մնացած էր այս ճակատումէն, սակայն երբ վախ կար որ Եւրոպան պարտուէր պատերազմը, Ամերիկան միջամտեց եւ յաղթանակի նժարը հիմնովին յեղաշրջուեցաւ: Ամերիկայի միջամտութիւնը տեղի ունեցաւ երկու ճակատներու վրայ:

Ամերիկեան նաւատորմի նաւաստիներուն ցամաքահանումը՝ Նորմանտիի (Ֆրանսա) վրայ, 6 Յունիս, 1944-ին:

Ամերիկեան օդուժի արքանական ռումբերով յարձակումը՝ Դալիսի Վիքոնիան եւ Նաքագաքի քաղաքներուն վրայ, Օգոստոս 1945-ին: Այս պատերազմին Ամերիկան տուաւ 407 հազար զոհ:

2. Բորիայի Պատերազմը (1950-1953) : Հիւսիսային Քորէան՝ Սովետական Միութիւնը նեցուկ ունենալով, յարձակեցաւ Հարաւային Քորէայի վրայ՝ գրաւելու զայն: Հետագային՝ անոնց միացաւ նաեւ Չինաստանը:

Իսկ Հարաւային Քորէան պաշտպանելու համար գոյացաւ դաշնակցութիւն (coalition) մը՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութենէն, գլխաւորութեամբ Միացեալ Նահանգներուն: Ասոր արդիւնքը եղաւ որ Հարաւային Քորէան գոյատեւ որպէս անկախ եւ ազատ երկիր:

Այս պատերազմին Ամերիկան տուաւ 36,000 զոհ:

3. Վիեթնամի Պատերազմը (1965-1973) : Հիւսիսային Վիեթնամը նեցուկ ունենալով Սովետ Միութիւնն ու Չինաստանը, յարձակեցաւ Հարաւային Վիեթնամի վրայ՝ որուն նեցուկ կը կանգնէր Միացեալ Նահանգները, որպէսզի Հարաւային Վիեթնամը համայնավարութենէ ազատ կացուցուէր, սակայն դժբախտաբար այդ երազը չիրականացաւ: Ամերիկան տուաւ 58,220 զոհ:

4. Աֆղանիստանի Պատերազմը (2001-2021) : Այս պատերազմին դրոյսապատճառն էր 9 Սեպտեմբեր, 2001-ի օդանաւային յարձակումները Նիւ Եորքի երկնապալաց երկու շէնքերու եւ Ուաշինկթընի պատերազմական նախարարութեան

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԵ. ՀԱՏՈՐԻ ԶՈՅԳ ԳԻՐՔԵՐՈՒ



Երկարատեւ բարի ու գեղեցիկ աւանդութեան հաւատարիմ՝ Հայկազեան համալսարանը այս տարի ալ հայագիտական մտքին ներկայացուց իր ընթացիկ արգասիքը՝ Հայկազեան հայագիտական հանդէսը, որուն 55րդ տարին էր 2025-ը: 1000 էջէ ու 50-է ատէլի յօդուածներէ բաղկացած երկու գիրքերը Հայկազեանի հերթական ներդրումն են հայագիտութեան, զոր նշելու համար 17 Փետրուարին համալսարանին մէջ մէկտեղուած էին խումբ մը գրասէրներ:



Խմբագրական կազմի անդամ տիկին Միլվա Փափազեան նախ հրաւիրեց ներկաները յոտնկայս լուստեամբ յարգելու Հանդէսի խորհրդատու մարմինի անդամ փրոֆ. Մուրատ Հասրաթեանի, երկարամեայ յօդուածագիր տոքթ. Արմենակ Եղիայեանի եւ աշխատակից դոկտ. Կարինէ Աւետեանի յիշատակը: Փափազեան ամփոփ ներկայացուց զոյգ հատորներու բովանդակութիւնը, նշելով անոնց խմբային աշխատանքի արդիւնք ըլլալը, վերահաստատելով, թէ «ՀՀՀ կը հաւատայ, որ գիտութեան եւ քննական մտածողութեան վրայ հիմնուած իմացութեան ճամբով, հայագիտութիւնը իր դերը կ'ունենայ հայութեան դէմ ցցուած մարտահրաւերներու դիմագրաւումին մէջ»:

Ապա ելոյթ ունեցաւ Հանդէսի պատասխանատու խմբագիր դոկտ. Անդրանիկ Տագեւեան, որ անդրադառնալով 17 եւ 18րդ դարերուն հայուն արձանագրած մշակութային, հրատարակչական եւ այլ նուաճումներուն, հաստատեց, որ «այդ օրերուն կազմակերպական եւ հաստատութեանական ընդհանուր թոյլ կամ տկար վիճակին մէջ ի յայտ եկան երախտաշատ եւ երկարամտակէտ արդիւնքներու հաւատացող մարդիկ, որոնք հանդիսացան ատենի քաղաքացիական հասարակութեան զօրաշարժած աւագանին, որ տեսլական ունէր, նորարարական էր եւ հաւատաց հայութեան, չտկարացաւ տիրող ծանր պայմաններուն դիմաց»: Ան նշեց, թէ ՀՀՀ եւ Հայկազեան համալսարանը, նաեւ լիբանանահայ գաղութի բազմապիսի իրադարձութիւնները, արդիւնք են քաղաքացիական հասարակութեան աւագանիին, որ առանց ընկրկելու կը շարունակէ յանձնառու մնալ իր պարտականութիւններուն՝ թէկուզ վիրաւոր տեսլականով:

Համալսարանի շնորհալի ուսանողուի օրդ. Մերի Նեմշէլիքեան ծիրանափողի վրայ նուագեց Խաչատուր Աւետիսեանի «Կռունկները», որմէ ետք Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան հիւպատոս պրն. Մեդրակ Սարգսեան ուղղեց իր ողջոյնի խօսքը, ուր ՀՀ Հանդէսի հրատարակութեան 55ամեայ յարատեւող աւանդը նկատեց խօսուն ապացոյց՝ զոյգացած աւանդոյթի, հետեւողականութեան, գիտական պատասխանատուութեան ու տարիներու նուիրումի եւ գիտակցումի աշխատանքի: Հայագիտութիւնը դիտելով նաեւ իբրեւ մտածողութիւն, «որը միաւորում է լեզուն, պատմական յիշողութիւնը, գրականութիւնը եւ մշակոյթը՝ որպէս մէկ ամբողջական ինքնութիւն», հիւպատոսը հաստատեց, որ «արեւելահայերէն եւ արեւմտահայերէն հայագիտութիւնները կարելի է պատկերացնել որպէս նոյն մշակութային մարմնի երկու փոխլրացնող ուղղութիւններ, որոնք սնունդ են նոյն արքիւրից եւ ծառայում նոյն նպատակին՝ հայ մշակոյթի ամբողջականութեան պահպանմանը»: Այս պատկերին մէջ պարուն Սարգսեան առանձնացուց Հանդէսի դերը, ուր հայագիտութիւնը ոչ միայն կը պահպանուի, այլեւ կը զարգանայ գիտական արժանապատուութեամբ եւ բաց մտքով, դառնալով «վստահելի հարթակ, որտեղ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն հայագիտական միտքը հանդիպում են, փոխլրացնում միմեանց եւ հարստացնում ընդհանուր գիտական դաշտը»:



Աւարտին ելոյթ ունեցաւ համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փօլ Հայտօսեան, որ նշեց, թէ «կիրառական հայագիտութիւնը» իբրեւ իր խմբագրական առաջնորդող յօդուածին նիւթ ընտրած Հայկազեան հայագիտական հանդէսը քայլ մը ատէլի կը մօտենայ այնպիսի մասնագիտութիւններու, որոնք ուղղակիօրէն կ'առնչուին հայու ամէնօրեայ կեանքին, որոնք կ'արտացոլան յատուկ պարագաներու սերտողութեանց (case studies) ընդմէջէն՝ յարաբերաբար արդի գիտական մօտեցումներու շնորհիւ: Նախագահը փափաք յայտնեց, Հանդէսին մէջ տեսնելու երիտասարդ յօդուածագիրներու գործեր, ուր քննուին «մարդկային (նաեւ հայուն) ինքնութեան եւ գոյութեան սպառնացող կարգ մը երեւոյթներ, ինչպիսիք են խօսքի եւ խղճի ազատութիւնը, իրաւունքի եւ ուժի մրցակցութիւնը, փոքրամասնութիւններու հալածանքը, կենսոլորտային վտանգները, արդի ստրկութեան երեւոյթներ, տնտեսութիւն եւ բարոյագիտութիւն, հոգեմտաւոր առողջութիւն, աւանդական հաստատութիւններու ճրգնաժամ, արհեստական եւ բնական բանականութեան մրցում եւ ատոնց նման նիւթեր»: Վեր. դոկտ. Հայտօսեան մեծապէս գնահատել է տք խմբագրական մին աշխատանքը, յայտարարեց, որ ԱՄՆէն տոքթ. եւ տիկին Վիզէն Ահարոնեան 105,000 նույնի մոնիթրաւորութեամբ կը ստանձնեն Հանդէսի յաջորդ եօթ տարիներու մեկենասութիւնը՝ շնորհակալութիւն յայտնելով անոնց:

Հուսկ՝ խմբային լուսանկարէ ետք տեղի ունեցաւ աւանդական կարկանդակի հատում եւ անպաշտօն գրոյց համալսարանի բակին մէջ:

Հենքին վրայ, հիմք ունենալով թէ յարձակողները զինուած էին Աֆղանիստանի մէջ: Ամերիկան կ'ուզէր թէ չէ գոքացնէր Էլ-Բալտա ահաբեկչական կազմակերպութիւնը եւ թէ ալ վերջ տալ թալիբանի իշխանութեան: Ամերիկան քաշուեցաւ Աֆղանիստանէն եւ տուաւ 2.461 զոհ:

5. Իրաքի Պատերազմը (2003-2011): Այս պատերազմին պատճառն էր «կարծուած» զանգուածային ոչնչացման զէնքերու գոյութիւնը, զորս ծառայած էր կառավարութեան քննաձեռններու կործանման: Ամերիկան տուաւ 4,500 զոհ՝ սակայն յաջողեցաւ սպաննել մեծատեր Սատամ Հիւսէյնը:

Այս արթիւ՝ եւ կը մտաբերմ բարի երթ, մեզի ապաստան տուող երիտասարդ երկրին: